Ազգ
Azg

20 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2013 ՈՒՐԲԱԹ 223(5305)

ISSN: 1829-1651

# Ադրբեջանցի մաքսավոր՝ մաքսանենգ. Բաքուն փորձում է «հետքեր մաքրել»

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

«Ազգ»-ի երեկվա համարում մենք գրել էինք, որ Կարսի օդանավակայանում ձերբակալվել, Իգդիր է տեղափոխվել եւ թուրքական իրավապահներին նախնական ցուցմունքներ է տվել Ադրբեջանի պետական մաքսային կոմիտեի Նախիջեւանի ինքնավարության Սադարակի մաքսային անցակետի պետ Միրմահմեդ Սեիդովը:

Բաքվի լրատվամիջոցները երեկ Սեիդովի պաշտոնի հարցում որոշակի պարզություն են մտցրել: Ըստ այդմ, նա Սադարակի մաքսային վարչության պետն է, որին թուրք իրավապահները ներկայացրել են մաքսանենգության եւ դրամաշորթության մեղադրանք: Սեիդովի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը:

Մեր նախորդ հրապարակման մեջ ենթադրել էինք, որ Սեիդովի ձերբակալությունը կապ ունի վերջին օրերին Թուրքիայում ծավալված հակակոռուպցիոն գործողության շրջանակներում կատարված այլ ձերբակալությունների հետ: Մենք նաեւ ասել էինք, որ, ամենայն հավանականությամբ, թուրքական կողմը փորձելու է Սեիդովի գործը ծառայեցնել Իլհամ Ալիեւի քաղաքական հավակնությունները չափավորելու՝ իր նպատակադրվածությանը:

Թուրքիայից ստացվող տեղեկատվությունը, սակայն, մեր այդ ենթադրությունը չի հաստատում: Բանն այն է, որ ոստիկանության կողմից իրականացված ձերբակալություններին չափազանց խիստ արձագանքել է Թուրքիայի վարչապետ Էրդողանը: Տպավորություն է ստեղծվում, թե թուրքական ոստիկանությունը սլաքն ուղղել է հենց Էրդողանի կառավարության դեմ:

Տես էջ 5

# Քրտնաջան պայքար՝ Նոր տարվա սեղանի համար

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Ամեն դեկտեմբերին, կարելի է ասել՝ ողջ ամիսը Նոր տարվա առեւտուրը դառնում է հայ ժողովրդի գլխավոր օրակարգը: Թե ինչ են խոսում վիրտուալ տարածքում՝ Ուկրաինային տրվելիք ռուսական 15 միլիարդից, կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի դեմ բողոքելուց, թե մի այլ «ակտուալ» թեմայից, ողջ հայությունը դեռ դեկտեմբերի սկզբին մի ականջով է հետեւում՝ ողջ էությամբ ընկղմվելով մի այլ ակտուալ իրականության մեջ: Առնում է, կուտակում է, տեսակավորում է, խոթում սառնարանի ծակուծուկերը, սառնարանը լցվելիս՝ կախում է պատշգամբից՝ դրսի մինուս ջերմաստիճանն այս տարի Աստված տվել-չի խնայել:

Ու ամեն տարի է այսպես: Մարդն ինչ հոգեպահուստ ունի՝ տալիս է ուտելիքի, չեղած դեպքում՝ պարտք է վերցնում, գնում խանութից խանութ, փնտրում ամենաէժանն ու միաժամանակ ամենից որակովը (թեեւ ինքն էլ գիտե, որ այդպես չի լինում): Ու սովորաբար ծայրը ծայրին հասցնողների, ամիսը մի 100 հազար ծախսողների համար էն 150-200 հազարը մի հրաշքով, պարտքով թե առանց պարտքի՝ մի տեղից գտնվում է, որ ուտելիքը սարի պես տուն տանի, սարքի-լցնի Նոր տարվա սեղանին, ու արդեն Նոր տարու երրորդ-չորրորդ օրն ափսոսալով թափի: Բայց էս ապրելու ձեւը, Նոր տարի անելու էս հայկական կերպը (թե՝ տարվա մեջ էդ մի ուրախ տոնը կա), հայերս կամք ու համարձակություն չենք գտնում մեր մեջ փոխելու:

Տես էջ 8

## ՀԱՄԱՌՈՏ

### ԱԺ այսօրվա արտահերթ նիստում՝ նաեւ հայ-ռուսական գազային պայմանագրերը

Կառավարությունը երեկ տեղի ունեցած նիստում որոշում ընդունեց առաջարկել Ազգային ժողովի նախագահին՝ 2013-ի դեկտեմբերի 20-ին, ժամը 15-ին գումարել ՀՀ Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան՝ օրակարգ ներառելով մի շարք օրենքների նախագծեր եւ միջազգային պայմանագրեր: Խոսքը մասնավորապես «ՀՀ բյուջետային համակարգի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «ՀՀ 2013թ. պետական բյուջեի մասին» եւ մի շարք այլ օրենքներում փոփոխությունների, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարությունների միջեւ Հայաստանի Հանրապետություն բնական գազի, նավթամթերքների եւ չմշակված բնական ալմաստների առաքման ոլորտում համագործակցության, բնական գազի առաքման ժամանակ գների ձեւավորման կարգի վերաբերյալ, «Հայռուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի եւ հետագա գործունեության պայմանների մասին» պայմանագրերի մասին է:

### Սեւանի իշխանի պաշարի վերականգնման եւ ձկնաբուծության զարգացման հիմնադրամ

Կառավարության որոշմամբ կստեղծվի Սեւանի իշխանի պաշարի վերականգնման եւ ձկնաբուծության զարգացման հիմնադրամ: Վարչապետ **Տիգրան Սարգսյանը** նշեց, որ այս ծրագիրն իրականացվելու է պետություն-մասնավոր համագործակցության միջոցով, եւ որ պետք է հրավիրել նաեւ շահագրգիռ գործարարների ուշադրությունը, որպեսզի նրանք համագործակցող կողմ դառնան:

### Կառավարությունը գումար կտրամադրի Լեւոն Խեչոյանի եւ Արմեն Մազմանյանի բուժման համար

Ինչպես արդեն տեղեկացրել էինք, գրող Լեւոն Խեչոյանը վատառողջ է եւ գտնվում է Գերմանիայում: ՀՀ կառավարությունը երեկվա նիստում որոշեց, որ գրող Լեւոն Խեչոյանի եւ Երեւանի թատրոնի ու կինոյի պետական ինստիտուտի ռեկտոր, ռեժիսոր Արմեն Մազմանյանի բուժման ծախսերը հոգալու նպատակով կառավարությունը կտրամադրի համապատասխանաբար 20.000 եւ 10.000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

Ա. Ս.

# Իրան-Հայաստան երկաթուղու կառուցումը՝ 2015-ի կեսերից ոչ շուտ

«Հանգամանքների բարենպաստ զարգացման դեպքում Իրան-Հայաստան երկաթուղու կառուցման աշխատանքները կսկսվեն 2015 թվականի կեսերից ոչ շուտ», այդ մասին երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ ասաց «Հարավկովկասյան երկաթուղիներ» ընկերության գլխավոր տնօրեն **Վիկտոր Ռեբեցը**: Նա նշեց, որ Իրան-Հայաստան երկաթուղու տարեկան ապրանքաշրջանառության առավելագույն ծավալը, փորձագիտական գնահատականներով, կկազմի 15-18 միլիոն տոննա: Այդ ժամանակ հնարավորություն կստեղծվի ներդրումների վերադարձելիության համար, բայց այդ ցուցանիշին առաջին տարում չեն հասնի:

Ա. Ս.



# Պուտին. «Ռուսաստանը պետք է օգներ եղբայրական Ուկրաինային»



Դեկտեմբերի 19-ի կեսօրին Մոսկվայում՝ Միջազգային առեւտրի կենտրոնում, սկսվել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի ամենամյա «մեծ» եւ երկարատեւ մամլո ասուլիսը, որի ընթացքում նա պատասխանել է ամեն տեսակ հարցերի: Դահլիճ մտնելով եւ լրագրողներին ողջունելով՝ նախագահն անմիջապես անդրադարձել է Ռուսաստանի վերջին մեկ տարվա տնտեսական ցուցանիշներին, հաղորդում է «Ինտերֆաքս» գործակալությունը: Պուտինը նշել է, որ 2013-ին երկրի ՀՆԱ աճը կազմել է 1,4-1,5 տոկոս: Սղաճը մինչեւ տարեվերջ կկազմի 6,1 տոկոս՝ անցյալ տարվա 6,6-ի դիմաց:

Ուկրաինական «Ունիան» գործակալության թղթակիցը Պուտինին հարցրել է. «Ռուսաստանը որքա՞ն կվճարեր Ուկրաինային, որպեսզի վերջինս չնայի Եվրոպայի կողմը»: ՌԴ նախագահն ասել է, որ Ուկրաինային Ռուսաստանի ցուցաբերած իսկայական օգնությունը թելադրվում է եղբայրական երկրի ու հիմնական գործընկերոջ ներկայիս ֆինանսական ու քաղաքական ծանր վիճակով:

«Հավատացնում եմ ձեզ, որ դա ամենագլխավոր պատճառն է, որը մեզ դրդեց ընդունել այդ որոշումը», նշել է Պուտինը:

Նախագահը ընդգծել է, որ Ուկրաինային հատկացվող օգնությունը՝ 15 մլրդ դոլարի վարկը, բնավ կապված չէ կիեւյան Մայդանի իրադարձությունների եւ Ուկրաինա-Եվրոմիություն բանակցությունների հետ: Ըստ Պուտինի՝ Ռուսաստանը դեմ չէ Եվրոպայի հետ Ուկրաինայի ասոցացմանը, սակայն կպաշտպանի սեփական շուկան:

Պուտինը հիշեցրել է, որ «Գազպրոմը» անցյալում եւս քանիցս իջեցրել էր Ուկրաինային մատակարարվող գազի գները:

Պ. Ք.

# Ցույց տվեք

Դժվար է ասել, թե արդյոք կառավարության ներկայացրած եւ խորհրդարանի հաստատած «ՀՀ քաղաքացու անձնագրի» եւ «ՀՀ քաղաքացու նույնականացման քարտերի մասին» օրենքներում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու օրենք դարձած օրինագիծը որքանո՞վ է նպաստում Հայաստանից արտագաղթի նվազեցմանը: Թվում է, որ արտագաղթի կասեցումը որպես ծրագրային առաջնահերթություններից մեկն ընդունած մեր կառավարության համար ցանկացած օրինագիծ պետք է միտված լինի արտագաղթի կասեցմանը, բայց, օրինակ, ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչության պետ, գնդապետ **Նորայր Մուրադխանյանը**, որը գրպանում միշտ պահում է իր նույնականացման քարտը, երեկ լրագրողների հետ հանդիպմանը տեղեկացրել է, որ կենսաչափական անձնագրերով «ՀՀ քաղաքացիներն ավելի քիչ խնդիրներ կունենան արտասահմանյան դեսպանատներում մուտքի արտոնագիր ստանալիս եւ սահմանային անցակետերում»: Հետեւաբար, կենսաչափական անձնագիր կրող ՀՀ քաղաքացին ավելի հեշտ կարող է արտագաղթել, քան այսօր գործածվող անձնագրի տեր քաղաքացին, եւ եթե հաշվի առնենք, որ անգամ «այսօրվա ոչ հեշտ պայմաններում» արտասահմանյան դեսպանատների մոտ ՀՀ քաղաքացիների հերթեր են գոյանում, եւ շատերը մեկնում են, ուրեմն կարելի է պատկերացնել, թե ի՞նչ կլինի, երբ այդ հերթերում կանգնեն կենսաչափական անձնագրերով ՀՀ քաղաքացիները:



Մյուս կողմից, մեր կառավարությանը չի կարելի մեղադրել Հայաստանում արտագաղթի հիմնական դրդապատճառ գործազրկության դեմ չպայքարելու մեջ: Օրինակ, կառավարության վերջին նիստերից մեկում **Տիգրան Սարգսյանը** ցուցադրեց հայկական արտադրության առաջին պլանշետը, ինչի արտադրությունը, հասկանալի է, մեր երկրում բազմաթիվ աշխատատեղեր կբացի ՏՏ ոլորտի մասնագետների համար, որոնք, ի դեպ, այս օրերին, բողոքում են կենսաթոշակային պարտադիր կուտակային համակարգի դեմ` ձգտելով հասնել այդ համակարգի գործածությունից «պարտադիր» բաղադրիչը հանելուն: Ի դեպ, այս համակարգով էլ կառավարությունը հո մեր վատը չի՞ ուզում. կարծիք կա, եւ բավականին հիմնավոր, որ կենսաթոշակային այս համակարգի առավելությունները Հայաստանի շատ քաղաքացիներ, բարձր վարձատրվող ու մեծ գիտելիքների տեր ՏՏ ոլորտի մասնագետներ, չեն հասկանում, այնինչ մեր կառավարությունը մեզ պարզապես դեպի երջանկություն է տանում, դեպի շվեյցարական Ալպեր` ծերունական տարիքում դահուկ քշելու: Եվ քանի որ Հայաստանում շատերը սա չեն հասկանում, կառավարությունն էլ ստիպում է, որ հասկանան:

Բայց անցել են հասարակության թեկուզ մեկ խմբին ստիպողաբար բան հասկացնելու կոմունիստական ժամանակները: Ժամանակակից աշխարհում, երբ հասարակական խմբին որեւէ բան ես պարտադրում, թեկուզ լավ բան, թեկուզ տվյալ խմբի շահերից բխող, բայց տվյալ խմբին դեռեւս անհասկանալի, հետեւաբար` անընդունելի, ապա այդ խումբը սկսում է առնվազն մտածել արտագաղթելու մասին: Մանավանդ, երբ այդ խմբի անդամներն ունեն կենսաչափական անձնագրեր, որոնցով` «ՀՀ քաղաքացիներն ավելի քիչ խնդիրներ կունենան արտասահմանյան դեսպանատներում մուտքի արտոնագիր ստանալիս եւ սահմանային անցակետերում»:

Հիմա, կառավարության ներկայացրած երկու կոնկրետ օրինագծերը, մեկը` անձնագրերի, մյուսը` կենսաթոշակային համակարգի մասին. երկուսն էլ անցան փորձարկում, կենսաթոշակային կուտակային համակարգը` արդեն երեք տարի, իսկ կենսաչափական անձնագրերն ու նույնականացման քարտերը` 2012-ի հունիսի մեկից: Ըստ գնդապետ Մուրադխանյանի` «այսօրվա դրությամբ շուրջ 91 հազար քաղաքացի ունեն նույնականացման քարտ, իսկ շուրջ 4,5 հազար քաղաքացի ունեն կենսաչափական անձնագրեր»: Գնդապետ Մուրադխանյանը հանավանաբար չունի այդ անձնագրից, հակառակ պարագայում դա էլ ցույց կտար: Կուտակային կենսաթոշակային համակարգից, սակայն, կամավոր սկզբունքով օգտվողների այսօրվա թվին ոչ ոք չի ծանոթացնում, այնինչ եթե դա լավ բան է, ինչին շատ ենք ուզում հավատալ, ապա ինչո՞ւ կառավարության անդամները այդ համակարգի մեջ չեն: Օրինակ` գնդապետ Մուրադխանյանն ապացուցեց, որ նույնականացման քարտն իր համար շատ լավ բան է, քանի որ ունի, վարչապետ Տիգրան Սարգսյանն ապացուցեց, որ հայկական պլանշետը շատ լավ բան է, քանի որ ունի, բայց` կուտակային կենսաթոշակային համակարգը... Բոլորն ասում են` շատ լավ բան է, բայց ոչ ոք դա չի ապացուցում: Մինչդեռ կարելի էր, օրինակ, ինչ-որ հասարական շերտ վերցնել, թեկուզ միայն պաշտոնյաներից բաղկացած, կամ որեւէ տարածաշրջան եւ այնտեղ գործածել կուտակային կենսաթոշակային համակարգը եւ հենց դրա «պարտադիր» բաղադրիչով, տեսնեինք, ի՞նչ է դա, համոզվեինք, որ մարդիկ գոհ են:

Չունենք այդ հիմքը, իսկ հունվարի մեկից կունենանք կենսաչափական անձնագրեր, որոնցով «ՀՀ քաղաքացիներն ավելի քիչ խնդիրներ կունենան արտասահմանյան դեսպանատներում` մուտքի արտոնագիր ստանալիս, եւ սահմանային անցակետերում»:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

# Թուրքերը գլխագի՞ն են վճարում Սիրիայում սպանված ամեն մի հայի համար



Երեկ Երեւանում Սիրիայի դեսպանատանը տեղի ունեցավ հանդիպում Հայաստանում Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատար Իսսամ Նայալի եւ Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցության Հայաստանի վարչության ատենապետ Նարեկ Գալստյանի միջեւ: Վերջինիս ուղեկցում էին ՍԴՀԿ Հայաստանի վարչության անդամներ` փոխատենապետ Վազգեն Մեսրոպյանը, դեսպանորդ Դմիտրի Մարտիրոսյանը եւ Գագիկ Մելիքյանը: Հանդիպման ընթացքում պարոն Նայալը շնորհակալություն հայտնեց Հայաստանին ու հայ ժողովրդին Սիրիայի հարցում ունեցած հավասարակշիռ վերաբերմունքի համար, ինչպես նաեւ ընդգծեց Սիրիայում բնակվող հայերի դերն այդ երկրում խաղաղության ամրապնդման հարցում: ՍԴՀԿ ատենապետն ընդգծեց իրենց համար Սիրիայի տարածքային ամբողջականության պահպանման, ինչպես նաեւ եղբայրական երկրում խաղաղության հաստատման կարեւորությունը: Խոսելով տարածաշրջանային խնդիրների մասին` Նարեկ Գալստյանն իր խոսքում նկատեց, որ Սիրիայում խաղաղության հաստատմանը դեմ է հատկապես Թուրքիան, ինչպես նաեւ հիշեցրեց, որ միջազգային մամուլում բազմիցս նշվել է այն փաստը, որ Թուրքիան ամեն ինչ անում է, որ Սիրիայում քրիստոնյաներ ու հատկապես հայեր չմնան, հայկական համայնքը վերանա:

«Խոսակցություններ կան, որ որոշ թուրքական կազմակերպություններ գլխագին են նշանակել ամեն մի սպանված հայի համար»,- նշեց ՍԴՀԿ ատենապետը:

ՀՀ-ում Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատարը հույս հայտնեց, որ շուտով Սիրիայում խաղաղություն կվերահաստատվի, եւ Սիրիայի ու Հայաստանի միջեւ կվերականգնվեն երբեմնի աշխույժ եւ սերտ քաղաքական, տնտեսական եւ մշակութային կապերը:

ՍԴՀԿ մամլո դիվան

# Կառավարության նիստում` ապօրինի հորերի մասին

Բնապահպանության նախարարությանը կառավարության երեկվա որոշմամբ հատկացվեց մոտ 107,5 մլն դրամ, որից մոտ 5 միլիոնը` Արարատի եւ Արմավիրի մարզերում եղած ձկնաբուծական նպատակով կամ համայնքներին պատկանող ապօրինի շահագործվող, ինքնաշատրվանող հորերի լուծարման կամ կոնսերվացման, իսկ մնացած գումարը` նույն նպատակով «Հիդրոերկրաբանական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրելու համար:

# «SOS»-նոր ծառայություն ՎիվաՍել-ՄՏՍ-ից

«SOS» ծառայությունը հնարավորություն է ընձեռում տեղեկանալու մտերիմների քարտի հաշվեկշռի եւ վավերականության ժամկետի մասին:

Այժմ ՎիվաՍել-ՄՏՍ-ի բոլոր բաժանորդները հնարավորություն ունեն մշտապես տեղեկանալու իրենց մտերիմ կանխավճարային բաժանորդի քարտի վավերականության ժամկետի եւ հաշվեկշռի մասին եւ, հնարավորության դեպքում, վերալիցքավորելու այն:

«SOS» ծառայությունից օգտվելու համար պարզապես անհրաժեշտ է ուղարկել հարցման հրահանգը, որի մեջ նշվում է կանխավճարային բաժանորդի հեռախոսահամարը եւ այն գումարի չափը, որին հասնելու մասին բաժանորդը ցանկանում է տեղեկանալ:

Հարցման հրահանգը պետք է ուղարկել *155*կանխավճարային բաժանորդի հեռախոսահամարը*գումարի չափը# (օրինակ` *155*093298888*200#) ձեւաչափով:

Կանխավճարային բաժանորդը տեղեկացվում է, որ իր քարտի հաշվեկշռի եւ վավերականության ժամկետի վերաբերյալ հաղորդագրության ստացման հարցում է ուղարկվել եւ ինքն է որոշում` հաստատել հարցումը, թե` ոչ:

Հարցումը հաստատելու համար անհրաժեշտ է ուղարկել *155*հարցումն ուղարկած բաժանորդի հեռախոսահամարը# հրահանգը:

Ծառայությունը տրամադրվում է անվճար:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը` «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Պերճ Ստեփանյան. հարատեւ համալսարանականը

Պերճ Ստեփանյանը երկար ժամանակ հեռուստատեսության աշխատող էր: 1998-ից Երեւանի պետհամալսարանի հրատարակչության ղեկավարն է, 60-ն անց այդ մարդը մարմնավորում է հին դպրոցի ձեւավորած սերունդը, որի շարքերը հետզհետե նոսրանում են:

Պերճ Ստեփանյանի անթերի կոստյումները եւ արժանապատիվ քայլվածքը արդեն անցած մի ժամանակաշրջանի վկայություններ են: Պետհամալսարանի կենտրոնական մասնաշենք մտնելով՝ նա հասնում է իր աշխատասենյակի շեմը, գրասեղանի դարակից հանում ուրախ առիթների համար նախատեսված շոկոլադի տուփը եւ կոնյակի փոքր շիշը, ապա ինձ համառոտակի պատմում իր մասին:

Մտավորականների ընտանիքում ծնված Պերճ Ստեփանյանն ավարտել է Երեւանի պետհամալսարանի հայկական բանասիրության բաժինը: 1967-ին դարձել է Ազգային հեռուստատեսության մշակութային ծրագրերի գլխավոր խմբագիրը, այդ պաշտոնում մնալով մինչեւ 1998 թվականը: Միաժամանակ գլխավորել է հեռուստաֆիլմերի «Երեւան» ստուդիան, որը աչքի էր ընկնում արգասավորությամբ: 1990-ականների սկզբին կարճ ժամանակով դպրոցական դասագրքերի «Լույս» հրատարակչությունը ղեկավարելով՝ կարողացավ զուտ սպարտական պայմաններում լույս ընծայել 140 գիրք: Հետագայում՝ Հայաստանի Հանրապետության լսադիտողական տեխնիկայի պատմության համար առանցքային 1995-1998 թթ. նա ստանձնեց երկու հեռուստաալիքների ղեկավարությունը:



Փոքր էկրանից համալսարանական աշխարհ անցնելը դյուրին բան չէ: Երբ հարցնում եմ ներկայիս հանրային ծառայության որակի մասին, Պերճ Ստեփանյանը տխրությամբ ասում է. «Հեռուստատեսությունն ասօր տաղանդների պակաս չունի, բայց չի ղեկավարվում, տնօրենությունը չունի բանիմաց եւ ուղղորդիչ աշխատակիցներ: Նրան հաճախ դիմում են եւ խորհուրդներ ակնկալում, բայց ինքը այլեւս չի ուզում միջամտել, ասես այդ ամենն անցյալ լինի: «Ինձ հանդիմանում էին Արամ Ասատրյանի նման երգիչներին, ռաբիսին կարեւորություն տալու համար, բայց այսօրվա ծրագրերի բովանդակությունը, մեղմ ասած, ժպիտ է առաջացնում»:

### Հիրավի ակադեմիական աղբյուր

1919 թ. նախկին Գյումրիում Առաջին Հանրապետության օրոք հիմնված պետհամալսարանի հրատարակչությունը 1920-ականներից սկսած ակադեմիական աղբյուր դարձավ լույս ընծայված աշխատությունների որակով: Խորհրդայնացման տարիներին հրատարակվեցին Գերմանիայում, Ֆրանսիայում եւ Ռուսաստանում կրթություն ստացած հայ համալսարանական գիտնականների ձեռնարկներ հողագործության, քիմիայի եւ ֆիզիկայի վերաբերյալ:

1927 թվականին կարկառուն լեզվաբան Հրաչյա Աճառյանը լույս ընծայեց իր կոթողային «Հայերեն արմատական բառարանի» առաջին հատորը, մի դասական աշխատություն, որը 2003-ին վերահրատարակվեց Լիսաբոնի Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության օժանդակությամբ: Պետհամալսարանի հրատարակությունների ցանկում կան նաեւ օտարազգի հայագետների աշխատություններ, ինչպիսիք են, օրինակ, ֆրանսիացի Անտուան Մեյեի, գերմանացի Հայնրիխ Հյուբշմանի աշխատանքները: 1920-ից ի վեր լույս են տեսել տարբեր ճյուղերին նվիրված մոտ 5 հազար աշխատություններ, այդ թվում 175-ը՝ Գյուլբենկյան հիմնարկության օժանդակությամբ: Վերջիններիս թվում են պատմաբան Նիկողայոս Ադոնցի աշխատանքները, Ռուբեն Ղազարյանի գրաբարի ձեռնարկները:

Այդ օժանդակության շնորհիվ փրկվել են անտիպ ձեռագրեր, ինչպիսիք են Հրաչյա Աճառյանի, պատմաբաններ Նիկողայոս Ադոնցի, Մանանդյանի, Ղափանցյանի, հրապարակախոսներ Տերտերյանի եւ Հակոբյանի աշխատանքները, ինչպես նաեւ Հայոց ցեղասպանության պատմագրությանը, Հայաստանի ժամանակակից պատմությանը, գրական կարեւոր երկերին (Ավետիք Իսահակյանի բանաստեղծություններ, Գրիգոր Զոհրապի եւ Գուրգեն Մահարու արձակ գործեր եւ այլն) նվիրված ֆոնդեր: Պետք է ավելացնել Մալխասյանի ժամանակակից հայերենի բառարանի, Բախտիար Հովակիմյանի կեղծանունների բառարանի, Ռամազ Գորգաձեի հայերեն-վրացերեն բառարանի, Բարլեզիզյանի հայերեն-ֆրանսերեն բառարանի հրատարակումը:

Ինքնին հասկանալի է, որ գիտական անգնահատելի արժեք ունեցող այդ հրատարակությունները ամբողջ սերունդների ընձեռում են հարատեւման միջոցներ: Պերճ Ստեփանյանը դա լավ է գիտակցում. գիտական մտքի եւ հետազոտական գործունեության այդ կենտրոնում նա պայքարում է տարեկան մոտավորապես հիսուն աշխատություն հրատարակելու մշտական ռիթմի պահպանման համար: Այդ քաղաքականությունը, սակայն, դժվարացել է Գյուլբենկյան հիմնարկության ղեկավարությունում վերջերս կատարված փոփոխության պատճառով: Նոր ղեկավարությունը հանուն իր թվայնացման քաղաքականության կդադարեցնի՞ արդյոք համալսարանական հրատարակչությանը հատկացվող հանգուցային օգնությունը: Սա մտահոգության լուրջ պատճառ է, որը մեր բարեկամ Պերճ Ստեփանյանը դժվարանում է թաքցնել:

**ՏԻԳՐԱՆ ԵԿԱՎՅԱՆ**
France-Arménie, novembre 2013
Ֆրանս. թարգմ. Պ. Ք.

ԵՎՐՈԽՈՐՀՐԴԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

# Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի հարցերով կլոր սեղան Երեւանում



**Դեկտեմբերի 19-ին ՀՀ ԱԳՆ նախաձեռնությամբ եւ Եվրոպայի խորհրդի աջակցությամբ Երեւանում տեղի ունեցավ կլոր սեղան ԵԽ փորձագիտական խմբի (ԳՐԵՏԱ-ի) փորձագետների մասնակցությամբ:**

**Համաժողովում բացման խոսքով հանդես եկան ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ, Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի ղեկավար Վահրամ Կաժոյանը, ԵԽ երեւանյան գրասենյակի ղեկավարի տեղակալ Նաիրա Ավետիսյանը, ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ժողովրդավարացման ծրագրի պատասխանատու Օլիվեր Մակքոյը: Կլոր սեղանի աշխատանքներին մասնակցեցին Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի անդամները:**

**Հանդիպման ընթացքում քննարկվեց «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի» ԵԽ կոնվենցիայի դրույթների Հայաստանի կողմից կատարման ընթացքը՝ ԵԽ Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի փորձագիտական խմբի (ԳՐԵՏԱ-ի) եւ Կողմերի կոմիտեի կողմից արված առաջարկների լույսի ներքո: Ներկայացվեցին թրաֆիքինգի դեմ պայքարի ուղղությամբ ՀՀ-ում իրականացվող աշխատանքները:**

**Հանդիպման ավարտին մասնակիցները առաջարկություններ ներկայացվեցին Հայաստան-ԳՐԵՏԱ համագործակցության հետագա ծավալման վերաբերյալ:**

# Ֆեթուլլահ Գյուլենն ունի Էրդողանին խայտառակող սեռական բնույթի տեսանյութ. թուրքական մամուլ

**Արդի իսլամի աղանդի հիմնադիր Ֆեթուլլահ Գյուլենի եւ նրա հետեւորդների ձեռքում հայտնվել են Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանին եւ նրա գլխավորած «Արդարություն եւ զարգացում» կուսակցության (ԱԶԿ) 40 պատգամավորներին խայտառակող սեռական բնույթի տեսանյութեր: Թուրքական մամուլում այս լուրերն սկսել են շրջանառվել այն բանից հետո, երբ կոռուպցիայի եւ ապօրինությունների մեղադրանքների հիման վրա երեք նախարարների որդիների եւ մի շարք հայտնի գործարարների հետ 50-ից ավելի մարդ ձերբակալվեց, եւ Թուրքիայի օրակարգը ցնցած իրադարձությունների հետեւանքով Ստամբուլի ոստիկանապետ Հուսեին Չափքընի հետ միասին 50-ից ավելի բարձրաստիճան ոստիկաններ հեռացվեցին աշխատանքից:**

**Ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ը, մասնավորապես, թուրքական odatv.com կայքը գրում է, որ Թուրքիայում դեկտեմբերի 17-ին սկսված ձերբակալությունների հետ կապված Էրդողանի եւ կառավարության մյուս անդամների կոշտ հայտարարություններին ի պատասխան, Ֆեթուլլահ Գյուլենին մոտ հարաբերություններով հայտնի Լրագրողների եւ գրողների միությունը հայտարարություն է տարածել, որում նշել է, թե «ի հայտ են եկել նախորդ ընտրությունների հետ կախված, անձնական կյանքի անձեռնմխելիությունը խախտող անբարո մեթոդներ եւ նախաձեռնություններ բովանդակող նոր գործիքներ»: Ակնարկվում է նախորդ խորհրդարանական ընտրությունների ժամանակ գլխավոր ընդդիմադիր Ժողովրդահանրապետական կուսակցության առաջնորդ Դենիզ Բայկալի քաղաքական կարիերային վերջ դրած եւ ԱԶԿ-ի տարածած սեռական բնույթի տեսանյութի նման փաստերի հրապարակումը:**

**Կազմակերպության այդ հայտարարությունը կայքը դիտում է որպես զգուշացում կառավարությանը, ինչպես նաեւ ակնարկ, որ հնարավոր հրապարակվելիք ինտիմ տեսանյութերի հետեւում կանգնած չէ գյուլենյան շարժումը:**

**Կայքը գրել է նաեւ, որ մի քանի օր առաջ «Սոզջու» թերթի թղթակից Էմին Չոլաշանը խմբագրություն է ուղարկել վարչապետ Էրդողանի մերձավորներից մեկի անկողնային տեսարանները, եւ նշել, որ այդ տեսանյութը չեն հրապարակում այն պատճառով, որ գիտեն, որ այն կապված է Գյուլեն-Էրդողան դիմակայության հետ:**

**Ըստ կայքի, դրանից հետո սոցցանցերում տարածվել է վարչապետի հարազատ եղբոր՝ Մուստաֆա Էրդողանի մասին մի հոլովակ, որում նա մասնակցում է պետության հետ համագործակցող, մարդկանց առեւտրով զբաղվելու, կազմակերպված հանցագործությունների մեջ մասնակից լինելու եւ անչափահասներին մարմնավաճառության ներգրավելու մեջ մեղադրվող մի գործարարի մերձավորի հարսանյաց հանդեսին: Տեսահոլովակում Մուստաֆա Էրդողանը ընթերցում է վարչապետ Էրդողանի շնորհավորական ուղերձը նորապսակներին: Տեսանյութը տարածած անհայտ անձը ակնարկել է, որ նման ապացույցներ ունի նաեւ վարչապետի անձնական կյանքի եւ այդ գործարարի հետ նրա սերտ կապեր ունենալու մասին:**

**Թուրքական մամուլը գրում է, որ հնարավոր է՝ Գյուլենի աղանդի մոտ տեսանյութ կա նաեւ վարչապետ Էրդողանի անձնական ինտիմ կյանքի մասին, ու Լրագրողների եւ գրողների միության հայտարարությունը հենց դրա ակնարկն է: Մամուլը մեջբերել է նաեւ օրերս Գյուլենի արած հայտարարությունն այն մասին, որ մի քանի տարի առաջ Թուրքիայից արված հեռախոսազրույցում մեկն ասել է իրեն, որ «հարկադրված՝ նրա հետ այցելության է գնացել մի կնոջ»:**

**Թուրքիայի վարչապետ Էրդողանը հայտարարել է, որ իշխանությունները տեղեկացված չեն եղել ոստիկանության գործողություններից, եւ որ իրենք ամեն ջանք գործադրելու են իշխանության դեմ այդ գործողությունները բացահայտելու եւ կանխելու համար:**

## Գիտաժողով Մինսկում

# Եվրասիական ինտեգրում. տեղեկատվական մարտահրավերներ

Դեկտեմբերի 12-ին եւ 13-ին Բելառուսի մայրաքաղաք Մինսկում կայացավ «Եվրասիական ինտեգրում. Տեղեկատվական մարտահրավերներ» միջազգային գիտաժողովը, որին մասնակցում էին լրատվամիջոցների ղեկավարներ, քաղաքագետներ եւ քաղաքական վերլուծաբաններ, քաղտեխնոլոգներ եւ հայտնի լրագրող-վերլուծաբաններ Ռուսաստանից, Ղազախստանից, Բելառուսից, Հայաստանից, Ղրղզստանից, ինչպես նաեւ Ուկրաինայից եւ Ադրբեջանից: Վերակառուցման փուլ ապրող «ՌԻԱ Նովոստի» լրատվական գործակալության եւ «Մոսկովսկիե նովոստի» թերթի նախաձեռնությամբ գումարված այս համաժողովում կազմակերպիչներին հաջողվել էր միատեղել եվրասիական ինտեգրացիայի ուղղությամբ աշխատող գործնականում բոլոր հայտնի դեմքերին: Ուշագրավ էր նաեւ, որ իր ոլորտում տարվա խոշորագույն միջոցառում դարձած այս գիտաժողովի «ուղեղային գրոհներին» ակտիվորեն մասնակցում էին նաեւ Ուկրաինայի եւ Ադրբեջանի ներկայացուցիչները, որոնք չնայած հայտարարում էին, որ իրենց երկրները չեն պատրաստվում անդամակցել Մաքսային միությանը, սակայն հետաքրքրված են ընթացող գործընթացներով եւ գաղափարների գեներացման գործում պատրաստ են բերել իրենց կառուցողական մասնակցությունը: Մտքերի փոխանակությունն ընթացավ երեք փուլով: Առաջին փուլում քննարկվեցին եվրասիական տեղեկատվական դաշտի հիմնախնդիրները, երկրորդ փուլում՝ եվրասիական ինտեգրման զարգացումը ԶԼՄ-ների եւ հասարակության աչքերով, երրորդ փուլում՝ եվրասիական ինտեգրման ընկալումը հասարակական գիտակցության մեջ. եվրասիական նախագծի ազգային առանձնահատկությունները ԶԼՄ-ների հայելում: Այս վերլուծականի նպատակը ոչ այնքան վերաշարադրելն է կայացած «ուղեղային գրոհների» ընթացքը, որքան առկա խնդիրների վերլուծությունը, որովհետեւ, ինչպես պարզվեց, ապագա Եվրասիական տնտեսական միության կերտմանը մասնակցող պետությունների կառավարություններին խորհրդատվական ծառայություններ մատուցող վերլուծական կենտրոնների ներկայացուցիչները բավական տարբերվող հայացքներ ունեն եվրասիական ինտեգրման գալիք նպատակների եւ խնդիրների հարցում: Թվարկելով այդ խնդիրները եւ տարբեր երկրների համար առաջնահերթությունները՝ համոզվեցի, որ 2014 թվականը անխուսափելիորեն դառնալու է առնվազն մի քանի նման հավաքների տարի, որտեղ, լավատեսական հաշվարկներով, հնարավոր է լինելու գծագրել ապագա Եվրասիական տնտեսական միության գլոբալ զարգացման ուղղությունները, դրանք միության անդամ պետությունների հասարակություններին հասկանալի եւ ընդունելի դարձնելու համար:

### Ազգային ինքնիշխանության հիմնախնդիրը եւ օգուտներ ընդհանուր շուկայից

Կարեւոր հարցերից մեկը ձեւակերպվում է այսպես. ի՞նչ է ապագա Եվրասիական միությունը: Սահմանափակո՞ւմ է արդյոք անդամ պետությունների ինքնիշխանությունը եւ ի՞նչ կարգի օգուտներով է փորձում փոխհատուցել: Քննարկման մասնակիցներից մեկի թեթեւ ձեռքով շրջանառության մեջ դրված «ազգային ինքնիշխանության փոխարեն կոլեկտիվ ինքնիշխանություն» հասկացությունը շատերի համար դժվարամարս էր եւ հետագա բացատրությունների ու պարզաբանումների կարիք ունեցող: Մի կողմից կա Եվրոպական միության փորձը, որի ամբողջ զարգացումը եվրոպական ինքնագիտակցության հետեւողական ձեւավորման հիման վրա կոլեկտիվ ինքնիշխանության եւ կոլեկտիվ քաղաքական պատասխանատվության ձեւավորման գործընթաց է: Մյուս կողմից, սակայն, կոլեկտիվ ինքնիշխանություն ասելով, անպայմանորեն նկատի ունենք ազգային ինքնիշխանության որոշակի սահմանափակման հեռանկարը, ինչի արդյունքում ձեւավորվող ընդհանուր շուկան հաջողություն ունենալու համար պետք է որ ենթադրի նոր ինքնագիտակցություն եւ նոր ընդհանուր պատասխանատվություն: Սա շատ բարդ խոսակցության սկիզբն է եւ ոչ միայն Հայաստանի համար: Օրինակ՝ ղազախ վերլուծաբանները նիստերն ընդմիջող զրույցներում փորձում էին գտնել կոնսենսուսային լուծումներ Ղազախստանի բազմավեկտոր արտաքին քաղաքական ուղեգծի եւ եվրասիական ինտեգրման արդյունքում ձեւավորվելիք կոլեկտիվ ինքնիշխանության հասկացության միատեղման համար: Եթե նույնիսկ իբրեւ ընդհանուր հռչակված նպատակ այս վերջինը կարող է գոյության իրավունք ունենալ, ապա մանրամասնելիս եւ կոնկրետացնելիս ի հայտ են գալիս բազմաթիվ քաղաքական, աշխարհայացքային եւ գաղափարական բնույթի դժվարություններ: Այդ դժվարությունները հաղթելու համար անհրաժեշտ է գնալ ինտեգրացիոն գործընթացների մեջ ներգրավվող հասարակությունների միջեւ բաց, պարզ եւ բոլորին հասկանալի երկխոսության «ինչ ենք տալիս եւ ինչ ենք ստանում» սկզբունքով:

Գիտաժողովի նիստերից մեկի նախագահողը պարզ ասաց, որ Հայաստանի համար, օրինակ, եվրասիական ինտեգրման հիմքում ընկած է անվտանգային գործոնը, որովհետեւ այդ տարածքում է Հայաստանը լուծում իր ազգային անվտանգության ապահովման գլխավոր խնդիրը: Ղրղզստանի համար եվրասիական ինտեգրումը տնտեսական գլոբալ նախագիծ է, եւ այդ երկիրն ինքն է թակում Մաքսային միության դռները՝ իր քաղաքացիների տնտեսական կենսամակարդակի բարձրացման գերբարդ խնդիրը լուծելու համար:

Առայժմ որեւէ մեկը չի քննարկում Եվրասիական միությունում ընդհանուր տարադրամ մցնելու հարցը: Այն թողնված է ավելի հեռանկարային ժամանակների համար, երբ ձեւավորվելիք ընդհանուր շուկան այդ խնդիրը բնականոն կերպով կհասունացնի: Պարզ է, որ բոլորի հայացքները հառնում են Ուկրաինային, որտեղ այսօր դրամատիկ, հաճախ իռացիոնալ արժեքային բախումներում լուծվում է այդ երկրի ուր գնալու հարցը: Հատկապես Ռուսաստանը եւ Բելառուսը չեն կորցնում հույսը, որ արեւելյան սլավոն-եղբայրական Ուկրաինան կգա ամբողջացնելու տարածաշրջանային առեւտրատնտեսական նախագիծը, ինչպիսին այսօր հառնում է Մաքսային միությունը:

Գիտաժողովի մասնակիցները հետաքրքրությամբ մեկնաբանում էին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի այն հայտարարությունը, ըստ որի եվրասիական ինտեգրման եւ եվրոպական ինտեգրման գործընթացների միջեւ հակասություն չկա: Այդ քաղաքական հայտարարությունը ոգեւորեց արեւելաեվրոպական երկրները ներկայացնող մասնակիցներին, ներառյալ Բելառուսի ներկայացուցիչներին, որովհետեւ բոլոր այդ հասարակություններում այդ երկու գործընթացների միմյանց հակադրման եւ միմյանց բացառող մոտեցումների սպառնալիքը մտահոգում է շատերին: Ներկաներից ոմանք, որոնք ուշադրությամբ հետեւում էին այդ ելույթին հաջորդող լրահոսի տեղեկություններին, հետաքրքրությամբ արձանագրում էին, որ անմիջապես ի հայտ եկան առաջարկություններ: Եվրասիական ինտեգրման գործընթացի միտումները կանխատեսել փորձող գալիք հավաքներին կազմակերպիչներից ոմանք հնարավոր են համարում մասնակից դարձնել Գերմանիայի, Իտալիայի եւ Ֆրանսիայի գործընկերներին: Սա շատ հետաքրքրական միտում է, որն իրականություն դառնալու դեպքում իսկապես կարող է հանել անիմաստ եւ շատ ջանք խլող լարվածություններ:

Քննարկվող հարցերի շարքում առանձնապես հետաքրքրական էր եւս մեկը: Կդառնա՞ արդյոք Մաքսային միությունը տնտեսական զարգացման եւ մարդկանց կենսամակարդակի բարձրացման այնպիսի հզոր խթան, որը ձեւավորվելիք ընդհանուր շուկան կդարձնի գրավիչ եւ ամբողջովին ընդունելի ինտեգրման գործընթացին մասնակցող հասարակությունների համար: Այլ կերպ ասած՝ վերջին տարիներին Մաքսային միության մեջ արձանագրված առեւտրի եւ տնտեսության բուռն աճի ցուցանիշները կարո՞ղ են նույնքան դրական եւ գրավիչ լինել հաջորդ տարիներին, ինչը լուրջ խթան կհանդիսանա արժեքային նոր մոտեցումների ձեւավորման համար:

### Արժեքային համակարգի ձեւավորման խնդիրը որպես առաջնահերթություն

Ձեւավորման փուլում գտնվող եվրասիական ընդհանուր շուկան առայժմ հիմնված է ընդհանուր տնտեսական տարածքից ստացվող օգուտների մասին գաղափար դառնող դատողությունների հիման վրա: Վերոհիշյալ գիտաժողովի կազմակերպիչները ակնկալում էին ներկաների թարմ գաղափարները եւ նոր մոտեցումներն այն մասին, թե կդառնա՞ն արդյոք եվրասիական ընդհանրության մասին շահագրգիռ ինտելեկտուալների գաղափարները նոր ընդհանրացնող եւ համախմբող գաղափարախոսության հիմք: Ճիշտն ասած, Մինսկի գիտաժողովը այդ հարցը չլուծեց, որովհետեւ, չնայած հայտարարված նպատակին, այդպես էլ ամփոփիչ գաղափարների չհանգեցրեց: Ռուսաստանցի, բայց ավելի շատ ղազախստանցի եւ բելառուս մասնակիցների, նաեւ ուկրաինացիների եւ Ղրղզստանի ներկայացուցչի ելույթները լուսաբանում էին այն առանձնահատկությունները, որոնք կան համագործակցող պետությունների իշխանական եւ ինտելեկտուալ վերնախավերի շրջանում եւ վերաբերում են ավելի շատ այն խոչընդոտներին եւ օբյեկտիվ առանձնահատկություններին, որոնք առայժմ հաղթահարված չեն եւ խանգարում են ինտեգրման գաղափարախոսական հենքի ձեւավորմանը: Մոսկվացի շատ ճանաչված վերլուծաբաններից մեկը կեսկատակ-կեսլուրջ ասաց, որ այն գաղափարախոսական կարծրատիպերը եւ հասկացությունները, որոնք ստացել են գիտակցության մեջ ամրապնդված առասպելների (միֆերի) տեսք, հուշում են, որ կարելի է լրջորեն ստեղծել այլ կարծրատիպեր եւ առասպելներ, որոնք կծառայեն ինտեգրման նպատակին: Այստեղ նախ եւ առաջ նա նկատի ուներ Ուկրաինայի օրինակը, որտեղ քաղաքական պայքարը իշխանության համար սկսեց հենվել իռացիոնալ առասպելների վրա, թե իբր ուկրաինացի ժողովուրդը չի ուզում լինել Եվրասիական տնտեսական միության անդամ, որովհետեւ իրեն համարում է Եվրոպայի մաս եւ եվրոպական արժեքների կրող, եւ սա այն դեպքում, երբ Եվրոպական միության մաս դառնալու հրավեր չի եղել եւ տեսանելի ապագայում չի լինելու: Սակայն Եվրոպական միության գրավիչ կերպարն իր բոլոր իրական եւ թվացյալ առավելություններով միանգամայն բավարար է դարձնում, որ հանուն իր հռչակած արժեքների մարդիկ դուրս գան բարիկադների վրա: Եվրասիական գաղափարախոսության ստեղծագործական զարգացման անհրաժեշտությունն արդեն իսկ զգացվում է: Ճիշտ է, որ ավելի քան 140 տարվա պատմություն ունեցող եվրասիականությունը հետխորհրդային տարածքում ինտելեկտուալ շրջանակներում տարածվելով եւ մեկնաբանվելով՝ ընդունվել է ճատերի կողմից: Սա նախ եւ առաջ տափաստանի եւ անտառի ընդհանրության, սլավոնականության եւ թյուրքականության համակեցության գաղափարախոսությունն է, որի ամենահայտնի գաղափարախոսը Լեւ Գումիլյովն էր: Սակայն պատմականորեն ձեւավորված այդ գաղափարախոսությունը մշակման եւ հղկման, լրացման եւ մանրամասնելու կարիք ունի, մանավանդ եթե ուզում է, որ դրա կրողը դառնան ոչ միայն արեւելասլավոնական ու թյուրքական, այլեւ մյուս պետությունները: Այս հարցի լուծումը կնպաստի ավելի խոշոր գաղափարախոսական համադրույթի մշակմանը, որն օբյեկտիվորեն հառնելու է ինտեգրացիոն գործընթացի ծավալման այն պահին, երբ հարց կծագի, թե արդյոք ապագա Եվրասիական միությունը ծրագրո՞ւմ է դառնալ ռազմաքաղաքական դաշինք, որն իշխում է հետխորհրդային տարածքում: Սա մոտակա մի քանի տարիների քննարկման հարց է: Առայժմ գաղափարախոսության վերածվելու համար հիմք հանդիսացող ընդհանրացնող գաղափարն այն է, որ Եվրոպական միության եւ ասիական-խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցության միջեւ ընկած տարածքն ունի ընդհանրացնող շահեր եւ մոտեցումներ հանուն սեփական լիարժեք գոյության:

### Ազգային առանձնահատկությունների հանգամանքը ինտեգրման գործընթացում

Ներկաները հետաքրքրությամբ էին լսում վիճակագրության եւ հետազոտությունների վրա կառուցված իմ տեղեկությունները, որ հայաստանյան հասարակությունը պայմանականորեն բաժանված է երեք մեծ խմբի: Առաջին խմբում Ռուսաստանի եւ նրա դաշնակիցների հետ ինտեգրումն ըստ ամենայնի զարգացնելու կողմնակիցներն են, որոնց, նույնպես պայմանականորեն, կարելի է եվրասիացիներ անվանել: Երկրորդ խմբում եվրոպականության համոզված կողմնակիցներն են, որոնք գտնում են, որ Հայաստանը եվրոպական արժեհամակարգի կրող է եւ եվրոպական քաղաքակրթության մաս: Նրանց հայացքներն ուղղված են Արեւմուտքի՝ մասնավորապես Եվրոպայի կողմը: Եվ վերջապես երրորդ խմբում նրանք են, ովքեր համոզված են, որ Հայաստանը ոչ Եվրոպա է, ոչ Եվրասիա եւ ոչ էլ մեծ Մերձավոր Արեւելք: Այս գաղափարի կողմնակիցները համոզված են, որ Հայաստանն ուրույն քաղաքակրթություն է կամ գուցե սուբքաղաքակրթություն, որտեղ խաչվում են վերոհիշյալ բոլոր արժեքները եւ հազարամյակների ընթացքում դրանք ստեղծել են մի ուրույն, ավելին, ինքնուրույն աշխարհայացքային արժեհամակարգ: Ահա թե ինչու հայ հասարակությունում իշխող գաղափարների մեջ ժամանակակից, արդի հնչողություն ունեցող կոնսենսուսի փորձ է այն քաղաքական հայտարարությունը, որ Հայաստանը կլինի ապագա Եվրասիական տնտեսական միության ամենաեվրոպական անդամը: Տարբեր երկրների վերլուծաբանների շրջանում մեր այս մոտեցումներն ընդունվում են հետաքրքրությամբ, որովհետեւ նրանք այստեղ ոչ թե օտարման միտում են տեսնում, այլ, ընդհակառակը, եվրոպական արժեհամակարգի հետ մերձեցման եւ համագործակցության եւս մեկ հարթակ: Մինսկում անցած միջազգային համաժողովը ցույց տվեց, որ թե ազգային հարթակներում, թե ընդհանուր եվրասիական գաղափարական քննարկումներում 2014 թվականին ծով անելիք կա, եթե Եվրասիական միության ջատագովները ցանկանում են հաստատուն եւ անշրջելի դարձնել ինտեգրացիոն գործընթացը:

ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ
քաղաքական վերլուծաբան,
բանասիրական գիտությունների թեկնածու

# Սիրիայի պատերազմն ազդում է իսլամական աշխարհի վրա

## *Այնտեղ կռվում են 70 երկրից եկած 11 հազար սուննի եւ 5 հազար շիա*




Սիրիայի քաղաքացիական պատերազմը հետզհետե ավելի մեծ ազդեցություն է գործում իսլամական աշխարհի վրա: Դրա դրսեւորումներից մեկը դարձել է իրադրության ապակայունացումը հարեւան Լիբանանում եւ Իրաքում: Սակայն, ինչպես նշում են փորձագետները, Սիրիայի տարածքն էլ աստիճանաբար վերածվում է տարբեր երկրներից եկած սուննի եւ շիա գրոհայինների բախումների մարտադաշտի:

Լոնդոնի թագավորական քոլեջին առընթեր Արմատականության ուսումնասիրման միջազգային կենտրոնի գնահատմամբ, քաղաքացիական պատերազմի երկուսուկես տարվա ընթացքում 11 հազար սուննի գրոհայիններ արտերկրներից Սիրիա են եկել նախագահ Բաշար Ասադի վարչակազմի դեմ կռվելու նպատակով:

Նրանց 70 տոկոսը եկել է մերձավորարեւելյան ուրիշ երկրներից, 18 տոկոսը՝ Եվրոպայից, հիմնականում՝ Ֆրանսիայից եւ Մեծ Բրիտանիայից: Սուննի խմբավորումների մեծ մասը կապված է «Ալ Ղաիդայի» հետ: Այդ խմբավորումների շարքերում կռվում են ընդհանուր առմամբ 70 երկրների ներկայացուցիչներ:

Օտարերկրացիներից ոմանք էլ կռվում են Բաշար Ասադի կողմնակիցների շարքերում: «Ամերիկայի ձայն» ռադիոկայանի տվյալներով, ներկայումս Սիրիայում կան հազարավոր շիա գրոհայիններ: Նրանց նշանակալի մասը լիբանանյան «Հզբոլլահ» շարժման ակտիվիստներ են, որոնք վճռական դեր են խաղում Դամասկոսը Լաթաքիային կապող Կալամուն լեռնային շրջանի համար մղվող մարտերում:

Սիրիայի հակամարտության մասնակիցների մեջ հետզհետե ավելանում է շիա իրաքցիների թիվը: Վերլուծաբանների կարծիքով, նրանք արդեն 5 հազարից ավելի են: Շիա գրոհայինների ներգրավմանը նպաստել է շիա իրաքցիների առաջնորդ Մուքթադա Սադրի հոգեւոր ուսուցիչ, իրանցի այաթոլլահ Քազիմ ալ Խայերիի հրապարակած կոչը: Փորձագետները նշում են, որ Սիրիայի վարչակարգը առանց իրանցիների օգնության չէր կարողանա վերստին տիրել ռազմավարական նախաձեռնությանը: Իրանը ոչ միայն համախմբել է իր շիա դաշնակիցներին, այլեւ Սիրիա է գործուղել իրանցի զինվորական խորհրդատուների: Շիա գրոհայինները ղեկավարվում են ոչ թե Դամասկոսի, այլ Թեհրանի ցուցումներով:

ՋՈՒԲԱ

# Բրիտանացիներն ու ամերիկացիները հեռանում են Հվ. Սուդանից




Մեծ Բրիտանիան սկսել է տարհանել իր քաղաքացիներին Հարավային Սուդանից, հաղորդում է BBC News հեռուստաալիքը: ԱՄՆ-ի օրինակին հետեւելով՝ Մեծ Բրիտանիայի ԱԳՆ-ն անվտանգության նկատառումներով որոշել է Հարավային Սուդանից հետ կանչել նաեւ բրիտանական դեսպանատան անձնակազմի մի մասին: Աֆրիկյան այդ հանրապետությունում պետական հեղաշրջման անհաջող փորձից հետո զինված բախումները շարունակվում են:

Երկրի մայրաքաղաք Ջուբա է ուղարկվել ինքնաթիռ, որը կտարհանի մեկնելու ցանկություն հայտնած 150 բրիտանացիներին: Մեծ Բրիտանիայի ԱԳՆ-ն Հարավային Սուդանում գտնվող բոլոր բրիտանացիներին հորդորել է մեկնելու ցանկություն ունենալու դեպքում դիմել դեսպանատուն:

Մայրաքաղաք Ջուբայի օդանավակայանը շարունակում է սպասարկել կանոնավոր առեւտրային չվերթերի մի մասը: Երկրում վերջին օրերին սկսված անկարգությունների պատճառով Պենտագոնը արդեն չորեքշաբթի օրը 120 ամերիկացի դիվանագետների եւ բարեկամ երկրների քաղաքացիների տեղափոխել էր հարեւան Քենիա: Պետդեպարտամենտի մամլո ծառայությունը բոլոր ամերիկացիներին կոչ է անում հեռանալ Հարավային Սուդանից եւ խոստանում է կազմակերպել նրանց տարհանումը, հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

Հարավային Սուդանում զինված հակամարտությունը սկսվեց դեկտեմբերի լույս 16-ի գիշերը: Հակամարտ կողմերն են նախկին փոխնախագահ Ռիեկ Մաչարը եւ գործող նախագահ Սալվա Կիիրը: Սպանվածների թիվն անցնում է 500-ից: Ջուբայի օդանավակայանում ՄԱԿ-ը բացել է գաղթականների ճամբար, որտեղ արդեն 20 հազար մարդ է հավաքվել:

Մաչարը եւ Կիիրը երկու խոշոր ցեղերի (դուերա եւ դինկա) ներկայացուցիչներ են: Հարավային Սուդանի ներկայիս կառավարությունում փաստորեն չեն մնացել նուերա ցեղի ներկայացուցիչներ, ուստի Մաչարի կողմնակիցները սկսել են հակակառավարական ելույթներ, որոնց վերաճել են զինված բախումների: BBC-ի վերջին տեղեկությունների համաձայն, խռովարարները դեկտեմբերի 19-ին գրավել են Բոր քաղաքը:

# Ադրբեջանցի մաքսավոր՝ մաքսանենգ. Բաքուն փորձում է «հետքեր մաքրել»

*1-ին էջից*

**Նախօրեին ձերբակալվել են մի քանի նախարարի որդիներ, իսկ երեկ էլ հայտնի է դարձել, որ նույնն սպասում է նաեւ նրանց հայրերին, որոնք Թուրքիայում իշխող կուսակցության անդամ են: Այս համապատկերին Սադարակի մաքսային վարչության պետի ձերբակալությունը բոլորովին այլ ենթատեքստ է ստանում: Այն է՝ որ թուրք եւ ադրբեջանցի պաշտոնյաները ներգրավված են նույն կոռուպցիոն գործարքներում:**

**Հավանաբար այս տպավորությունը ցրելու համար երեկ ադրբեջանական virtualaz.org-ը, հղում անելով Անկարայի իր «վստահելի աղբյուրներին», տեղեկացրել է, որ Սեիդովի ձերբակալության համար հիմք է հանդիսացել հեռավոր երթուղիների թուրք վարորդներից ստացած «խմբային նամակը, որով նրանք բողոքել են Սեիդովի կողմից դրամաշորթության աղաղակող փաստերի դեմ»:**

**Որ Անկարայի «վստահելի աղբյուրներ» գոյություն չունեն, եւ սույն վարկածը հորինվել է Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարության կողմից, կասկած իսկ չի հարուցում: Քանի որ որքան էլ «եղբայրական», Ադրբեջանը եւ Թուրքիան ամեն դեպքում տարբեր երկրներ են, եւ թուրք իրավապահները չէին կարող ադրբեջանցի բարձրաստիճան մաքսային պաշտոնյայի ձերբակալել միայն այն բանի համար, որ հեռավոր երթուղու թուրք վարորդները վերջինիս մեղադրում են դրամաշորթությամբ զբաղվելու մեջ:**

**Թուրքական կողմը նպատակահարմար կգտներ Ադրբեջանի պետական մաքսային կոմիտեին հայտնել, որ Սեիդովն զբաղվում է դրամաշորթությամբ եւ կխնդրեին ձեռնարկել համապատասխան քայլեր՝ ինչպես պահանջում է միջպետական հարաբերությունների արարողակարգը կամ առավելագույնը Սեիդովը Թուրքիայում կհայտարարվեր անցանկալի անձ եւ կարտաքսվեր:**

**Նրան, մինչդեռ, ոչ միայն ձերբակալել եւ հարցաքննել են, այլեւ տարել են դատարան, որն էլ խափանման միջոց է ընտրել կալանքը: Հետեւաբար, Սեիդովը մեղադրվում է Թուրքիայի տարածքում կատարած հանցագործության մեջ: Տեղեկացվում է, որ Թուրքիայում Ադրբեջանի դեսպանատունն այդ հարցով «բանակցություններ է սկսել թուրքական իշխանությունների հետ»:**

**Թե ի՞նչ ընթացք կունենա Սեիդովի գործը, պարզ կդառնա գուցե առաջիկա օրերին: Դա կախված կլինի հատկապես նրանից, թե որքա՞ն հետեւողական կլինի Էրդողանի կառավարությունը ոստիկանության հետ դիմակայության ընթացքում: Ակներեւ է դառնում, որ Թուրքիայի կառավարությունը նպատակադրվել է արդարացնել կոռուպցիայի մեջ մեղադրվող նախարարներին եւ նրանց որդիներին՝ բանը ներկայացնելով որպես ներքաղաքական մրցակցության դրսեւորում:**

**Գուցե հենց Էրդողանի վճռականության հանդեպ վստահությունն էլ պաշտոնական Բաքվին հույս է ներշնչել, որ Սեիդովի կալանքը հնարավոր է փոխարինել նրան Ադրբեջանի «արդարադատության մարմիններին հանձնելու» մասին որոշմամբ: Եվ հենց այդ հեռանկարով էլ ադրբեջանցի տեղեկատվական տեխնոլոգները հնարել են, որ Սադարակի մաքսային վարչության պետը թուրք իրավապահների ուշադրության կենտրոնում է հայտնվել հեռավոր երթուղու վարորդների դիմում-բողոքի արդյունքում:**

**Դա նման է «հետքեր մաքրելուն»: Կհաջողվի՞ իլհամալիեւյան վարչախմբին ծածկաքողարկել հերթական կոռուպցիոն սկանդալը: Գուցե՝ այո, բայց դրանից էապես ոչինչ չի փոխվի: Բարձրաստիճան մաքսավորին մաքսանենգության, կոռուպցիայի եւ դրամաշորթության մեջ մեղադրելու մասին տեղեկատվությունը սփռվել է աշխարհով մեկ: Եվս մեկ անգամ ակներեւ է դարձել, որ Ադրբեջանում օրինավոր իշխանություն չկա, գոյություն ունի վարչախումբ, որի բոլոր գործողություններն ունեն հանցավոր նպատակներ եւ իրականացվում են դարձյալ հանցավոր միջոցներով:**

# Հոնդուրասում ստեղծվել է հակակոռուպցիոն անկախ դատախազի պաշտոն

Հոնդուրասի խորհրդարանը հատուկ օրենքով հիմնել է անկախ դատախազի պաշտոն: Այդ դատախազը կզբաղվի հակակոռուպցիոն քննություններով, հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

Փաստաթղթի տեքստի համաձայն, այդ պաշտոնյան պարտավոր է իր ջանքերը կենտրոնացնել չինովնիկների եւ քաղաքական գործիչների չարաշահումների փաստերի վրա: Ի թիվս այլ բաների, դատախազն իրավունք կստանա օգտագործելու երկրի Հետաքննությունների կենտրոնական բյուրոյի (ՀԿԲ) տրամադրության տակ գտնվող ամեն տեսակ նյութեր: Բացի դրանից, նա կկարողանա ՀԿԲ-ի ուժերն ու միջոցներն օգտագործել իր քննություններն անցկացնելու համար:

Անկախ դատախազը իրավունք կստանա քննություններ իրականացնել նախկին եւ գործող վարչապետերի, պատգամավորների, բոլոր մակարդակների չինովնիկների, ինչպես նաեւ կապիտալի պետական մասնաբաժին ունեցող կորպորացիաների կառավարիչների նկատմամբ: Օրենքը մեկ քննության անցկացմանը հատկացնում է կես տարուց ոչ ավելի:

Օրենքը Հոնդուրասի խորհրդարանում էր 2011-ից, երբ առաջին խմբագրմամբ ընդունվել էր ստորին պալատում: Վերին պալատը փաստաթղթում մի քանի անգամ կատարել էր փոփոխություններ, որոնց պատճառով հարկ եղավ կրկին քվեարկել օրենքի օգտին:

Անկախ դատախազի պաշտոնը հիմնվել է բազմաթիվ հասարակական ակտիվիստների պնդմամբ, որոնք պահանջում էին արդյունավետ գործիք ստեղծել Հոնդուրասի իշխանության վերին օղակներում ծագած բազմաթիվ կոռուպցիոն սկանդալները քննելու համար:

ԽՆԴԻՐ

# Գրադարաններում գրքերի պակաս է զգացվում

Աշխենն արդեն մի քանի տարի է ինչ պարբերաբար օգտվում է քաղաքային եւ համալսարանական գրադարաններից, բայց շատ հաճախ չի կարողանում գտնել պետք եկած գրականությունը. «Քննությունների շրջանում գործն էլ ավելի է դժվարանում, քանի որ գրադարանում եղած գրքերի քանակը չի բավականացնում ուսանողներին: Գրքեր կան, որոնց օրինակներն ընդհանրապես չկան գրադարաններում եւ դրանք մենք ստիպված ենք գնել կամ ձեռք բերել ինտերնետից»,- ասում է ԵՊԼՀ-ի ուսանողուհին եւ հավելում, որ իրեն կարդալուն տրամադրող պարտադիր պայմաններից մեկն էլ գրքի թղթի հոտի առկայությունն է:

Գրքասեր ընթերցողների պահանջները բավարարելու համար պետք է գրադարանները պարբերաբար համալրել, իսկ դրա համար անհրաժեշտ է պետական օժանդակություն եւ գումար, որովհետեւ միշտ չէ, որ ամուր են գրադարան-հեղինակ եւ գրադարան-հրատարակիչ կապերը:

Ավետիք Իսահակյանի անվան գրադարանը համալրվում է ավելի շատ նվիրատվությունների արդյունքում ստացված գրականությամբ, քան` պետական միջոցներով ձեռք բերվածներով:

«Մենք համագործակցում ենք մտավորականների եւ գիտնականների հետ, ովքեր պարբերաբար նվիրատվություններ են անում եւ արդյունքում ամեն օր մեզ մոտ տասից քսան գիրք է հավաքվում: Կան մարդիկ, ովքեր մեզ են տրամադրել իրենց գրադարանները, եւ մենք շատ ոգեւորված ենք, որ գրադարանի գրքերն ավելանում են: Բացի նմանատիպ նվիրատվություններից, պետությունը մեզ ամեն տարի գումար է հատկացնում նոր գրականություն ձեռք բերելու համար, բայց այդ գումարը չի բավականացնում: Նշեմ նաեւ, որ մենք լինելով խոշորագույն գրադարան, հրատարակիչներից չենք ստանում պարտադիր օրինակներ»,- ասում է Ա. Իսահակյանի անվան գրադարանի փոխտնօրեն **Ռուզաննա Բարսեղյանը**:

Ի տարբերություն Ա. Իսահակյանի անվան գրադարանի` Ազգային գրադարանը ստանում ՀՀ տպագիր արտադրանքի պարտադիր երկու օրինակ, որոնցից մեկը արխիվացման համար է:

Ըստ Հայաստանի Ազգային գրադարանի փոխտնօրեն **Ռաֆիկ Ղազարյանի**` տարվա կտրվածքով գրադարանը ձեռք է բերում 40-45 հազար անուն գրականություն, որի մեջ մտնում են թե՛ նվիրատվությունները, թե՛ գնումները եւ թե՛ պարտադիր օրինակները: Գնումները կատարում են պետության կողմից տրամադրված գումարով, որն ամեն տարի հատկացվում է գրադարանին: Պարտադիր օրինակները ստանում են հրատարակիչներից: Չնայած կան գրքեր, որոնց պարտադիր օրինակները չեն ստանում, որովհետեւ այդ գրքերը բավականին թանկ են:

Երեւանի պետական համալսարանի Սարգիս եւ Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի համալրումն այլ ընթացք ունի. «Մենք գրքերը ձեռք ենք բերում համապատասխանեցնելով ֆակուլտետների հետ: Իսկ մեր դասախոսների հեղինակած գրքերից պարտադիր բավականին օրինակներ ունենք»,- փաստում է ԵՊՀ գրադարանի տնօրեն **Եզնիկ Միրզոյանը**:

Տարիներ առաջ պարտադիր օրինակի մասին ընդունված օրենքով հրատարակիչները պարտավորվում են տպագրված գրքերից երկու օրինակ տրամադրել Երեւանի կենտրոնական գրադարաններին: «Անտարես» հրատարակչության գլխավոր խմբագիր **Արմենիկ Նիկողոսյանը** խոսելով պարտադիր օրինակի մասին, ասաց, որ իրենց մոտ հրատարկված գրքերից պարտադիր օրինակներ են տրամադրվում միայն Ազգային գրադարանին եւ Ազգային գրապալատին: Իսկ մյուս գրադարանները այդ գրքերը կարող են ձեռք բերել պետության կողմից հատկացված միջոցներով: Ըստ նրա, բավականին վատ է գյուղական գրադարանների վիճակը: Գյուղապետարանները գումար են ստանում, որը շատ հաճախ չի ծախսվում գրադարանները համալրելու համար:

Գրեթե բոլոր գրադարանների համար բավականին մեծ խնդիր է արտասահմանյան գրականություն ձեռք բերելը, քանի որ դա կապված է մեծ գումարների հետ:

Երեւանի Ազգային գրադարանը արտասահմանյան գրականություն ձեռք բերելու համար հայտարարում է մրցույթ եւ այն կազմակերպությունը, որը կկարողանա առաջարկվող գրականությունն ավելի մատչելի գնել-բերել Հայաստան, նա էլ հաղթում է մրցույթում:

Իսահակյանի անվան գրադարանը բրիտանական, ամերիկյան, ֆրանսիական եւ պարսկական գրականություն է ձեռք է բերում դեսպանատների հետ համագործակցության շնորհիվ, իսկ ԵՊՀ գրադարանը արտասահմանյան գրականությունը ձեռք է բերում դրամաշնորհների միջոցով:

Հուսով ենք, որ մոտ ապագայում գրքասեր ընթերցողները գրադարաններում գրքի պակասի խնդրին չեն բախվի եւ կկարողանան ձեռք բերել անհրաժեշտ գրականությունը:

ԷՄՄԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

# Կարեւորում են նաեւ հիշողությունը

Դոկտ. Ալպեր Օքտեմի աջակցությամբ 2010-ին ստեղծված «պատմական հետազոտությունների պաշտպանության հիմնադրամը» (ՊՀՊՀ) նպատակ էր հետապնդում բացահայտելու 1915-ի իրադարձությունների ժամանակ տեղի ունեցած խղճահարության գործողությունները, հանրությանը ներկայացնելու այն մարդկանց, ովքեր, ի գին զոհողությունների, պաշտպանել էին տառապյալներին: Հաստատությունը այժմ վերանվանվել է, ըստ «Հրանտ Դինք» հիմնադրամից ստացված հաղորդագրության, «Պատմության եւ հիշողության հետազոտությունների հիմնադրամ», եւ ընդլայնել է իր գործողությունների ոլորտը, ընդգրկելով դրանցում կապը հիշողության եւ պատմության միջեւ, ինչպես նաեւ հետեւանքները հետագա սերունդների վրա: Թուրքերենով հաստատությունը կոչվում է «Tarih ve Hafiza Arastirmalari Tesvik Fonu»:

Հ.Ծ.

# Անի եւ Այդա Գավաֆեան ջութակահար քոյրերը Գիւլպենկեանի ապարանքին մէջ կ՛ունենան համերգ

Առաջին անգամ չէ, որ նիւեորքաբնակ ազգային բարերար տէր եւ տիկին Էդուըրդ եւ Կարմէն Կիւլպենկեանները իրենց Փաունդ Ռիջի ապարանքէն ներս կը հիւրընկալեն հանրայայտ արուեստագէտներ: Տօնական օրերու նախօրէին Մեթրոփոլիթընի օպերայի եւ Նիւ Եորքի ֆիլհարմոնիք նուագախումբի աստղեր յաճախ ունեցած են ելոյթ ընդարձակ եւ արուեստի գործերով հարուստ այս տան մէջ, ուր եկած է արուեստասէր լուրջ հասարակութիւն մը:

Այս տարի եւս, շարունակելով այս գեղեցիկ աւանդութիւնը, Կիւլպենկեանները հրաւիրած էին նախկին պոլսահայ եւ արդէն աշխարհահռչակ Անի եւ Այդա Գավաֆեան քոյրերը տալու իրենց ջութակի համերգը: «Մաունթ Քիսքօ համերգային ընկերակցութիւնն է որ կը հրաւիրէ երաժշտասէրները նման համերգի: Ըսենք նաեւ, որ ԱՄՆ նախկին նախագահ տէր եւ տիկին Բիլ եւ Հիլըրի Քլինթընները մաս կը կազմեն այս համերգային ընկերակցութեան` ապրելով համանուն քաղաքին մէջ:

Յայտագրին դաշնակահարի ընկերակցութեամբ կը մասնակցէր Ջոնաթան Ֆելդմընը:

Յայտագիրն ունէր երկու բաժին. առաջին մասը նուիրուած էր Բախի (1685-1750) ստեղծագործութիւններէն` «Trio Onata in C major, BWV 1037 եւ Մորից Մոսքոուսքիի (1854-1925) Suite for Two Violins and piano in G Minor, Op. 71: Ըսենք որ Անին կը նուագէ «Ստրադիվարիու» ջութակով:

Կարճ դադարէ մը ետք, յայտագրին երկրորդ բաժինով ներկայացան Բոհուսլավ Մարդինուի (1890-1959) Sonata for Two Violins and Piano, H213, Բելա Բարթոքի (1881-1945) Selections from 44 Duos for Two Violins, BB104, Sz. 98, ու վերջապէս` Պապլօ դը Սարասաթեի (1844-1908) Navarra (Spanish Dance) for Two Violins and Piano, Op. 33:

Պէտք չունինք տալու եւ գրելու անոնց գեղարուեստական մակարդակին մասին. միջազգային մամուլն ու արուեստի քննադատները տարիներ առաջ գնահատանքով արձանագրած են արդէն անոնց կատարողական մակարդակը: Ամերիկայէն դուրս, արուեստի մեծ ոստաններու մէջ Անին ու Այդան արժանացած են արուեստասէրներու երկա՜ր ծափողջոյններուն:

Այդ երեկոյ, այդ սալոնին մէջ, շրջապատուած մեր մեծ ծովանկարիչ Այվազովսկիի գործերով, ազգային հպարտութեան օր մըն էր որ հրամցուց հիւրընկալ զոյգը: Կիւլպենկեանները զարմիկներն են Գալուստ Կիւլպենկեանին: Անոնց հայրը բարերարն է Նիւ Եորքի առաջնորդանիստ Ս. Վարդան Մայր եկեղեցւոյ առաջնորդարանի համալիրին, որ կը կոչուի «Կիւլլապի Կիւլպենկեան» կեդրոն: Բարերարներն են նաեւ` Հալէպի «Կիւլպենկեան մայրանոցին»: Այսօր եւս անոնք իրենց նուիրատուութեամբ օգտակար կ՛ըլլան հայ դպրոցին, Թէքէեան մշակութային միութեան եւ մեր մամուլին:

Հոգեկան բաւարարութեամբ ներկաները վերադարձան տուն, պահելով այդ երեկոյթի քաղցր յիշատակները:

ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ
Նիւ Եորք

# Անդրեյ Բարանովը հանդես եկավ ՀՊԵՆ-ի հետ

Երեկ Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի ունեցավ Արամ Խաչատրյանի 110-ամյակին նվիրված միջազգային փառատոնի գալա համերգը: Համերգային ծրագրով հանդես եկան Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը` անվանի ջութակահար Անդրեյ Բարանովի հետ:



Լրագրողների հետ հանդիպմանը Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը նշեց, որ համերգային ծրագրում կնիչեն միմիայն Խաչատրյանի ստեղծագործությունները: Ի դեպ, այս համերգային ծրագիրը երիտասարդական նվագախումբը կատարել է նաեւ Մոսկվայում:

Ի դեպ, Բարանովը կատարելու է Խաչատրյանի «Ջութակի կոնցերտը», որի երաժիշտն ստեղծագործությունն սովորել է հատուկ փառատոնին կատարելու համար:

«Կոմպոզիտորի հոբելյանին նվիրված փառատոնը մեծ ոգեւորությամբ անցավ. փառատոնը նպաստեց ոչ միայն Խաչատրյանի գործերի քարոզչությանը, այլ նաեւ մենք փորձեցինք ներկայացնել նրա գործերն այլ ֆորմատով: Խոստանում ենք, որ փառատոնը կլինի ամենամյա, ինչը շատ մեծ պարտականություն է, քանի որ փառատոնը պետք է ամուր հիմք ունենա, որպեսզի շարունակություն էլ ունենա»,-ասաց Սմբատյանը:

Խոսելով Բարանովի մասին` Սմբատյանն ասաց, որ իրենք արդեն համագործակցել են. նոյեմբերի 24-ին, ՀՊԵՆ-ը Բարանովի հետ Մոսկվայի կոնսերվատորիայի Մեծ դահլիճում համատեղ համերգով է հանդես եկել:

Բարանովը երաժշտական աշխարհ է մտնել նախքան... ծնվելը, քանի որ, ինչպես ասաց երաժիշտը, ծնվել է երաժիշտների ընտանիքում. «Երախտապարտ եմ ծնողներիս, որ լավագույն երաժիշտների միջոցով ինձ սովորեցրել են հասկանալ եւ սիրել դասական երաժշտություն: Ինձ համար ավելի հեշտ է կատարել երաժշտությունը, քան` խոսել դրա մասին», եւ ավելացրեց. «Ես վաղուց էի երազում Խաչատրյան կատարել եւ ահա այսօր ինձ տրվել է այդ առիթը: Կարծում եմ` այդ ստեղծագործությունը կմնի իմ երգացանկ, քանի որ Խաչատրյանը բացառիկ կոմպոզիտոր է»:

Ի դեպ, Բարանովը 2012-ին մասնակցել է Եղիսաբեթ թագուհու անվան մրցույթին եւ հաղթելով` ստացել է Ստրադիվարիուսի «Հագինս» ջութակը:

Ս. Հ.

# Այսօրվանից կմեկնարկի «Հայու տեսակ» հայագիտական դասախոսությունների շարքը

«Կարին» ավանդական երգի-պարի խմբի նախաձեռնությամբ եւ «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի աջակցությամբ դեկտեմբերի 20-ից կմեկնարկի նոր նախագիծ` «ՀԱՅՈՒ ՏԵՍԱԿ» խորագրով, հայագիտական դասախոսությունների շարքը:

Մշակութային արժեքների պահպանությանն ու տարածմանն ուղղված իր գործունեությամբ հայտնի «Կարին» ավանդական երգի-պարի խումբն այս նախաձեռնությամբ նպատակ ունի նպաստել հայ երիտասարդության շրջանում ազգային ինքնաճանաչողության բարձրացմանն ու մշակութային բարձր ճաշակի ձեւավորմանը:

Համաձայն նախագծի ձեւաչափի` յուրաքանչյուր ամիս կկազմակերպվի մեկական հանրամատչելի դասախոսություն հայագիտական որեւէ թեմայով: Դասախոսելու համար կիրավիրվեն կրթության, մշակույթի, գիտության, ռազմական եւ հոգեւոր ոլորտների լավագույն մասնագետներ` ներկայացնելու հայի դիմագիծը, դրսեւորման առանձնահատկություններն ու նվաճումներն այս բնագավառներից յուրաքանչյուրում:

«Կարին» ավանդական երգի-պարի խմբի հիմնադիր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Գագիկ Գինոսյանի կարծիքով` նման դասախոսություններն առաջնային կարեւորություն ունեն երիտասարդ սերնդին ազգային գաղափարախոսության հենքի վրա կրթելու, դաստիարակելու, ռազմահայրենասիրական ոգի սերմանելու գործում:

«ՀԱՅՈՒ ՏԵՍԱԿ» շարքի առաջին դասախոսությունը, որը կվարի պարագետ Գագիկ Գինոսյանը, տեղի կունենա այսօր, դեկտեմբերի 20-ին, ժամը 19:00, Թեքեյան կենտրոնում:

Այս եւ առաջիկա բոլոր դասախոսությունների մուտքն ազատ է:

# ՀՀ հավաքականը Եվրո-2016-ի վիճակահանության ժամանակ կընդգրկվի 4-րդ զամբյուղում

ՈւԵՖԱ-ի գործադիր կոմիտեն հաստատել է ֆուտբոլի 2016-ի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի անցկացման կանոնակարգը: Ինչպես հայտնի է, 2016-ից սկսած Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլում 16-ի փոխարեն հանդես են գալու 24 հավաքականներ: Դա զգալիորեն մեծացնում է եզրափակիչի ուղեգիր նվաճելու Հայաստանի հավաքականի հնարավորությունները:

Ըստ դրա, 2016-ի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում յուրաքանչյուր խմբում 1-ին եւ 2-րդ տեղը գրաված մնացած 8 հավաքականները, որոնք վիճակահանությամբ զույգեր կկազմեն: Առաջնության կազմակերպիչ Ֆրանսիայի հավաքականն առանց ընտրական մրցաշարի իրավունք ունի մասնակցելու եզրափակիչ փուլին:

Արդեն հայտնի են 6 զամբյուղների կազմերը, որոնցում տեղաբաշխվել են հավաքականները՝ հաշվի առնելով ՈւԵՖԱ-ի վարկանիշային ազամբյուղից մեկական հավաքական: Ահա մնացած զամբյուղների կազմը:

A. Իսպանիա, Գերմանիա, Հոլանդիա, Իտալիա, Անգլիա, Պորտուգալիա, Հունաստան, Ռուսաստան, Բոսնիա:

B. Խորվաթիա, Ուկրաինա, Շվեդիա, Դանիա, Շվեյցարիա, Բելգիա, Չեխիա, Հունգարիա, Իռլանդիա:

C. Սերբիա, Թուրքիա, Սլովենիա, Իսրայել, Նորվեգիա, Սլովակիա, Ռումինիա, Ավստրիա, Չեռնոգորիա:

E. Իսլանդիա, Հս. Իռլանդիա, Ալբանիա, Լիտվա, Մոլդովա, Մակեդոնիա, Ադրբեջան, Վրաստան, Կիպրոս:

F. Լյուքսեմբուրգ, Ղազախստան, Լիխտենշտեյն, Ֆարերներ, Մալթա, Անդորրա, Սան Մարինո, Ջիբրալթար:



2014-ի փետրվարի 23-ին Ֆրանսիայի Նիցա քաղաքում կայանալիք վիճակահանությամբ եվրոպական 53 հավաքականները կբաժանվեն 9 խմբի: 8 խմբերից յուրաքանչյուրում կլինեն 6-ական հավաքականներ, մեկում՝ 5: Քաղաքական նկատառումներից ելնելով ընտրական միեւնույն խմբում չեն ընդգրկվի Հայաստանն ու Ադրբեջանը, Ռուսաստանն ու Վրաստանը, Իսպանիան եւ Ջիբրալթարը:

Ընտրական մրցաշարի արդյունքներով խմբերում 1-ին եւ 2-րդ տեղերը զբաղեցրած հավաքականները, ինչպես նաեւ 3-րդ տեղ գրաված հավաքականների մեջ լավագույն արդյունքի հասած ընտրանին Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլի ուղեգիր կնվաճեն: Մյուս 4 ուղեգրերը անցումային խաղերում կվիճարկեն 3-րդ տեղը գրաված մնացած 8 հավաքականները...

դյուսակում գրաված դիրքը: Հաշվի են առնված 2010-ի աշխարհի առաջնության ընտրական եւ եզրափակիչ փուլում, 2012-ի Եվրոպայի առաջնության ընտրական եւ եզրափակիչ փուլում, 2014-ի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում հավաքականների ցույց տված արդյունքները:

Հայաստանի հավաքականն իր վարկանիշով ընդգրկվել է 4-րդ՝ D զամբյուղում: Այստեղ են նաեւ Լեհաստանի, Շոտլանդիայի, Ֆինլանդիայի, Լատվիայի, Ուելսի, Բուլղարիայի, Էստոնիայի եւ Բելառուսի հավաքականները, որոնցից ոչ մեկի հետ ընտրական մրցաշարում մեր ընտրանին չի կարող հանդիպել:

Վիճակահանության ժամանակ յուրաքանչյուր խմբում ընդգրկվելու է յուրաքանչյուր

Որոշակիորեն փոխվել է ընտրական մրցախաղերի խաղացանկը: Եթե նախկինում ընտրական մրցախաղերը բոլոր խմբերում հիմնականում տեղի էին ունենում ուրբաթ եւ երեքշաբթի օրերին, ապա այժմ խաղերը կայանալու են հինգշաբթիից մինչեւ հաջորդ երեքշաբթի: Այսինքն, յուրաքանչյուր օր տեղի են ունենալու 3 խմբերի ընտրական հանդիպումներ, ինչը հնարավորություն կտա ֆուտբոլասերներին գրեթե մեկ շաբաթ ամեն օր հետեւելու ընտրական խաղերին: Այն հավաքականները, որոնք ընտրական առաջին խաղը կանցկացնեն հինգշաբթի օրը, հաջորդ հանդիպումը կանցկացնեն կիրակի օրը: Որոշ խմբերում 2 տուրերի խաղերը կանցկացվեն ուրբաթ եւ երկուշաբթի, մյուսներում՝ շաբաթ եւ երեքշաբթի օրերին: Այսպիսով, ֆուտբոլասերները հնարավորություն կունենան հանգստյան օրերին եւս հետեւելու ընտրական մրցախաղերին:

# Բարեգործական միջոցառում Հենրիխ Մխիթարյանի մասնակցությամբ



Հենրիխ Մխիթարյանը մասնակցել է Դորտմունդի «Սուրբ Յոհաննես» հիվանդանոցում կազմակերպված բարեգործական միջոցառմանը: Նա ներկայացրել է «Բորուսիայի» նոր բարեգործական օրացույցն իր ինքնագրով: Միջոցառման ընթացքում Հենրիխը ստորագրել է 385 օրացույցի վրա, որոնցից յուրաքանչյուրը վաճառվել է 10 եվրոյով: Այդ գումարի կեսը կփոխանցվի «Դորտմունդի երեխաները վտանգի մեջ են» հիմնադրամին, որն օգնում է քաղաքի սոցիալապես անապահով երեխաներին:

«Բորուսիան» այս տարվա իր վերջին հանդիպումը կանցկացնի դեկտեմբերի 21-ին՝ մրցելով «Հերտայի» հետ: Այնուհետեւ ֆուտբոլիստներին կարճատեւ արձակուրդ կտրամադրվի: Հունվարի 5-ից «Բորուսիան» կսկսի նախապատրաստվել առաջնության 2-րդ շրջանին, որը կմեկնարկի հունվարի 25-ին: Իսկ մինչ այդ թիմը հունվարի 9-17-ը ուսումնամարզական հավաք կանցկացնի իսպանական Լա Մանգայում: Այնտեղ «Բորուսիայի» ֆուտբոլիստները ստուգողական խաղեր կանցկացնեն բելգիական «Ստանդարտի», գերմանական «Բոխումի» եւ գերմանական «Կայզերսլաուտերնի» հետ:

## Հաջող մեկնարկ

Արաբական Միացյալ Էմիրություններում մեկնարկել է շախմատի աշխարհի պատանեկան առաջնությունը: Հայաստանը ներկայացնող 28 շախմատիստներից 20-ը մրցաշարում հաղթանակով մեկնարկեցին:

Նրանց թվում են մինչեւ 18 տարեկանների մրցաշարի մասնակիցներ Կարեն Գրիգորյանն ու Հովհաննես Գաբուզյանը: Կարենը հաղթեց Ռոկաս Կլաբիսին, Հովհաննեսը պարտության մատնեց Անդրե Մեյլանին:



# Հայ կարատեիստների հարուստ ավարը



Սոֆիայում անցկացված կիոկուշին կարատեի միջազգային մրցաշարից մեդալների հարուստ ավարով տուն վերադարձան հայ կարատեիստները: Ֆեդերացիայի նախագահ Անդրանիկ Հակոբյանի գլխավորությամբ մրցումներին մասնակցած մեր 15 կարատեիստներից 10-ն արժանացան ոսկե մեդալների, 3-ը դարձան արծաթե մրցանակակիրներ:

Մրցումներին մասնակցում էին նաեւ Անգլիայի, Բուլղարիայի, Ռումինիայի, Շվեյցարիայի, Սերբիայի, Ռուսաստանի, Հունգարիայի, Հունաստանի եւ Իսրայելի հավաքականները:

Կիոկուշին ֆեդերացիայի նախագահ Անդրանիկ Հակոբյանը բնականաբար գոհ է տղաների ելույթից: Հավաքականի կազմում այս անգամ ընդգրկվել էին Երեւանից, հանրապետության մարզերից եւ Արցախից մեր ուժեղագույն կարատեիստները, որոնք պատվով հանդես եկան Սոֆիայում: Այս մրցաշարն ուժերի լավ ստուգատես էր աշխարհի առաջնությունից առաջ:

# Բրազիլահայ շախմատիստն ամրապնդում է դիրքերը

Բրազիլիայի շախմատի առաջնությունում հաղթարշավն է շարունակում Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը, որը հավակնում է չեմպիոնի տիտղոսին: 7-րդ տուրում Մխիթարյանը հերթական հաղթանակը տոնեց Ռաֆայել Դի Բեռարդինոյի նկատմամբ ու 6,5 միավորով շարունակում է գլխավորել աղյուսակը: 6-ական միավորով հայ շախմատիստին հետապնդում են Ցեզար Ումետսուբրոն եւ Ռաֆայել Լեյթաոն:

# Հայաստանի ընտրանին տարին եզրափակեց 35-րդ տեղում

ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակում Հայաստանի ազգային հավաքականը նախորդ ամսվա համեմատ մեկ հորիզոնականով նահանջել եւ տարին եզրափակում է 35-րդ տեղում: Հիշեցնենք, որ անցյալ տարեվերջին մեր ընտրանին 75-րդ տեղում էր: Հայաստանի հավաքականն այս տարի մեծ թռիչք գործեց եւ իր պատմության մեջ նոյեմբերին հանգրվանեց ռեկորդային՝ 34-րդ տեղում:

Նախորդ ամսվա համեմատ անփոփոխ է մնացել լավագույն տասնյակը՝ Իսպանիա, Գերմանիա, Արգենտինա, Կոլումբիա, Պորտուգալիա, Ուրուգվայ, Իտալիա, Շվեյցարիա, Հոլանդիա, Բրազիլիա:

Նախկին ԽՍՀՄ հանրապետություններից ամենաբարձր վարկանիշն ունի Ուկրաինայի հավաքականը, որը 18-րդ տեղում է: 22-րդ հորիզոնականն է զբաղեցնում ՌԴ հավաքականը, որին հաջորդում է մեր ընտրանին: Մյուս հավաքականների ցուցանիշներն այսպիսին են. 68. Ուզբեկստան, 81. Բելառուս, 94. Ադրբեջան, 95. Էստոնիա, 96. Մոլդովա, 101. Վրաստան, 102. Լիտվա, 114. Տաջիկստան, 116. Լատվիա, 128. Ղազախստան, 135. Թուրքմենստան, 147. Ղրղզստան:

# ՈւԵՖԱ-ն տարանջատեց Հայաստանի եւ Ադրբեջանի պատանեկան հավաքականներին

Ինչպես տեղեկացրել էինք, նոյեմբերի 28-ին կայացած վիճակահանությամբ 2015-ի Եվրոպայի մինչեւ 19 տարեկանների պատանեկան առաջնության ընտրական մրցաշարում Հայաստանի եւ Ադրբեջանի պատանեկան հավաքականները ընդգրկվել էին միեւնույն՝ 4-րդ խմբում:

ՈւԵՖԱ-ն որոշել է տարանջատել 2 հակամարտող երկրների հավաքականներին: Հայաստանի հավաքականն ընդգրկվել է ընտրական 9-րդ խմբում, որտեղ կմրցի Իտալիայի, Սերբիայի եւ Սան Մարինոյի ֆուտբոլիստների հետ: Ընտրական մրցաշարը կկայանա 2014-ի հոկտեմբերի 10-15-ը Սերբիայում:

Իսկ Ադրբեջանի հավաքականը մնացել է 4-րդ խմբում, որտեղ մրցելու է Սլովակիայի, Հունգարիայի եւ Սլովենիայի ընտրանիների հետ:

# «Բարսելոնը» չի բարելավելու Մեսիի պայմանները

«Բարսելոնի» փոխնախագահ Խավիեր Ֆաուսը հայտարարել է, որ ակումբը մտադիր չէ Մեսիի պայմանների բարելավման շուրջը բանակցություններ սկսել ֆուտբոլիստի հետ: Ֆաուսը նշել է, որ հարկ չկա յուրաքանչյուր կես տարին մեկ վերանայել պայմանագիրը եւ բարձրացնել ֆուտբոլիստի աշխատավարձը:

Լիոնել Մեսիի նոր պայմանագրի ժամկետը մինչեւ 2018-ի փետրվարն է: Նոր պայմանագրի կնքումից հետո Քրիշտիանու Ռոնալդուն ավելի շահավետ պայմաններով է շարունակում ելույթները «Ռեալում»: Նա ներկայումս աշխարհի ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստն է: Խոսակցություններ կան, թե իբր Նեյմարն էլ ներկայումս ավելի շատ է վաստակում Մեսիից:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Լիբանանցի լրագրողը՝ հայկական խոհանոցի մասին



***Ռամկավար Ազատական կուսակցության «ՌԱԿ մամուլ» օնլայն պաշտոնական կայքը հրատարակել է լիբանանցի սննդաբան Քերոլ Սաադի «Հայաստանի համը» խորագրով հոդվածը, որտեղ նա հիացմունքով է արտահայտվում հայկական խոհանոցի ամենատարբեր արժանիքների մասին:***

Նա իր հոդվածը սկսում է Ջորջ Բեռնարդ Շոուի «Չկա ավելի անկեղծ սեր, քան սերը ուտելիքի նկատմամբ» խոսքերով եւ մեկ առ մեկ քննարկում հայկական ճաշատեսակների բաղադրամասերը, բուրմունքն ու անմոռանալի համը: Նա չի մոռանում նաեւ նշել սեղանի շուրջը ստեղծված ջերմ, ընկերական մթնոլորտի մասին: Ինչպես որոշ այլ վայրերում, Հայաստանում եւս տան պատրաստված ճաշը անգերազանցելի է, ըստ նրա: Ոչ մի ռեստորան չի կարող մրցել դրա հետ: Սեղանը լի է ճաշատեսակներով եւ վիրավորական կարող է համարվել, եթե ամեն ինչ չհամտեսես: Ճաշատեսակները պատրաստվում են ըստ եղանակների, օգտագործելով թարմ միսը, բանջարեղենը, մրգերը եւ կանաչեղենը: Իսկ դրանք զարմանալիորեն առատ են Հայաստանում, գտնում է նա, առանձնացնելով մրգերի մեջ հատկապես դեղձն ու ծիրանը: «Այս վերջինը Մեծն Ալեքսանդրը մ.թ.ա. 4-րդ դարում Հայաստանից Հունաստան է բերել, որտեղից էլ հետագայում անցել է Հռոմ», գրում է նա:

Սաադը հիացմունքով է խոսում հատկապես ընկույզով եւ սխտորով համեմված սմբուկի, խաշի եւ տոլմայի մասին: Իսկ որպես յուրահատուկ հայ առանձնացնում է լավաշը, որն «ունի 12 հազար տարվա անփոփոխ պատմություն»:

«Շատ բանաստեղծներ գովերգել են հայերի կենսունակությունը, հյուրասիրությունը եւ աշխատասիրությունը: Այս բոլորը կարելի է գտնել հայկական խոհանոցում: Հակառակ տեղահանությունների եւ ողբերգական իրադարձությունների, նրանք պահպանել են իրենց բարոյական արժանիքներն ու ավանդույթները եւ ստեղծել փոքրիկ Հայաստաններ աշխարհի տարբեր ծայրերում», եզրակացնում է հոդվածագիրը:



Հ. Ծ.

# Քրտնաջան պայքար՝ Նոր տարվա սեղանի համար

*1-ին էջից*

Ու միջին վիճակագրական հայը մի ցանկությամբ է տոգորվում միայն՝ մի կերպ հայթայթած 150-200 հազարը արդյունավետ ծախսի, ամենաօպտիմալ գնումներով: Ու մրցակցության մեջ են մտնում նա ու մեր սուպերմարկետները. առաջինն ուզում է որքան հնարավոր է շատ ապրանք տանել իր 150 հազարով, երկրորդն ամեն ինչ անում է՝ հնարավորինս քիչ ապրանք տալու նրա 150 հազարի դիմաց: Այդ քրտնաջան պայքարն, անշուշտ, ավարտվում է սուպերմարկետների հաղթանակով, քանի որ վերջիններս, երբ փողոցային առեւտրին խաղից դուրս էին բերում ու խոսում էին մրցակցության ապահովումից, գների իջեցումից՝ «քաղաքակիրթն» էլ հետը փաթեթավորելով, բնականաբար, հակառակը, գների մենաշնորհներ ստեղծեցին ու մրցակցություն բառն անգամ մոռացվեց. ինչ մրցակցություն, երբ փոքր խանութներից շատերը չդիմացան, գյուղացին խաղից դուրս է, ո՞ւմ հետ մրցակցեն: Մնում է, որ իրար հետ մրցակցեն՝ միմյանց ջգրու ապրանքի գին գցեն ընդամենը, իսկ նույն գյուղացուց ապրանքն առնելիս միասնական բարձր գներ սահմանեն: Հարկեր, այո, նրանք մուծում են պետությանը, բայց մուծում են էլի մեր՝ հասարակ հարկատուի գրպանից: Մի երկու օրինակով ինքներդ համոզվեք: Ասենք՝ տավարի միսը (մի քիչ ոսկրոտը) «Տաշիր» առեւտրի կենտրոնի հարակից մսի պասաժից կարելի է ձեռք բերել 1800-2100 դրամով, իսկ ահա սուպերմարկետներում այդ նույն միսն արժե 2500-2800 դրամ:

Այսինքն՝ մեր սուպերմարկետները 1500 դրամով միսն ընդունելով վաճառքի, ոչ թե իրենց շահույթից են պետության հարկ վճարում, այլ բարձր գներ սահմանելով՝ էլի մեր գրպանը մտնում, բա ո՞ւր մնաց մրցակցության արդյունք ցածր գինը: Կամ 1 կգ կոտրած ընկույզը ես «Ֆիրդուսանցի» մոտ կանգնած ու ռուսիկաններին խաբս տվող օշականցի կնոջից 5 հազար դրամով եմ գնում, «Երեւան-Սիթիում» 6 հազար դրամից ավել արժե: Հիմա ի՞նչ մրցակցություն եւ ի՞նչ էժանություն եղավ, որով համոզում էին գնորդին, «քաղաքակիրթ» առեւտրի խոստումն էլ պոչից կպցնում: «Քաղաքակիրթ» ձեւով միայն ավելի շատ կլորվելն է ստացվում՝ փաթեթավորված ու մեր սեփական կամքով: Ու ասենք, որ ամեն անգամ, երբ սուպերմարկետից 10 հազար դրամի «քաղաքակիրթ» առեւտուր ես անում, իմացիր, որ այդ գումարի 3 հազարը օդին ես վճարել: Եթե հաշվես՝ դա ամսական պատկառելի գումար է կազմում, ու կպարզվի, որ սուպերմարկետային առեւտուրը մարդու բյուջեն անհիմն թեթեւացնում է ամսական մի 25-30 հազար դրամով՝ անորակ, չհիմնավորված թանկ եւ մենաշնորհային գներ ունեցող ապրանքներ առաջարկելով: Հետո էլ կենսաթոշակային կուտակային համակարգի դեմ են պայքարում (գուցե ճիշտ էլ անում են), բայց աշխատող երեւանցիների բյուջեների մի քսան-երեսուն տոկոսը սուպերմարկետներն են պետության թողտվությամբ անհիմն թալանում, այ, սրա դեմ է պետք պայքարել, կոշտ վերահսկողություն սահմանել եւ հիմնովին փոխել դրվածքը: Պատկերացրեք՝ դեկտեմբերին, երբ ամեն միջին վիճակագրական հայ 150-200 հազար դրամ է թողնում սուպերմարկետներում, ինչքան անիմաստ «օդի հարկ» է թողնում ու հարստացնում մեր օլիգարխներին:




Ու նաեւ՝ Նոր տարվա մոտենալու հետ մեր սուպերմարկետները կորցնում են չափ ու սահման՝ գների բարձրացման, անորակ ապրանքը սաղացնելու եւ մեզ հիմարացնելու առումով. 400 դրամի սահմանում գտնվող մեկ լիտր կաթը եթե մինչեւ վերջ էլ խմես՝ կաթի համ չես առնի, այս ամառ 100 դրամ արժեցող սեւ սալորը չիր դառնալուց հետո, որքան էլ տարօրինակ է՝ էլի 3-3,5 հազար արժե էն անբերք տարիների պես: Ձուն, որի ավելցուկից մի պահ խանութները չգիտեին ինչ անեին, արհեստականորեն դեֆիցիտ սարքելուց հետո հիմա հատը 80-90 դրամից չի իջնում: Միրգը համեմատաբար էժան է, բայց նայած՝ որը եւ որտեղ. արդեն ապրանքային տեսքը կորցրած մանդարինի վրա գրում են՝ ակցիա, ու դնում 300-350 դրամ, որ հենց առողջ ու թարմ մանդարինի գինը պիտի լիներ, քանի որ մանդարին արտահանող երկրներում այս տարի դրա բերքը նույնպես շատ է, եւ մանդարինը շան ոտի հետ գնում է: Բայց դե մերոնք ուրիշ են՝ քարից հաց քամող, իսկ լավ մանդարինը 500-800 դրամ է: Կորոլյոկի չիրն այս տարի մի 500 դրամով թանկ է, թե ինչու՝ պարզ չէ, երբ եւ այս միրգն էլ էր սեզոնին շատ, եւ բավական էժան էր: Այժմ մոտ 800 դրամ արժեցող բանանը վերջին օրերին կրկնապատիկ գին է ունենում, մերոնք այդպես էլ չսովորեցին քանակի եւ ոչ թե թանկության վրա վաստակել: Խոզի բուդը, որը միջին հայ ընտանիքի Նոր տարվա երջանկությունն է, այս պահին 2,5 հազար դրամից է սկսվում կիլոգրամը, հայտնի չէ, թե ինչ կլինի դրա գինը դեկտեմբերի 25-ից հետո:

Նոր տարվա սեղանի հաշվարկ անելը մոդայիկ է մեր ԶԼՄ-ների համար, մենք էլ մերն անենք. եթե ընկուզեղենի երեք տեսակից մեկական կիլոգրամ գնի ընտանիքը /ընկույզ՝ 6 հազար, նուշ 7000, պնդուկ կամ տխիլ՝ միջինը՝ 4 հազար դրամ, արդեն 17 հազար դրամ: Մի 4 կիլոգրամ տավարի միս՝ 10 հազար դրամ, երկու հավ՝ 5 հազար դրամ, տեղական հավի կիլոգրամը 1500-2000 դրամ է: Մի 5 հազար դրամ կպահանջվի գոնե 2 ձուկ գնելու համար: Խոզի բուդը մի 20 հազար դրամ կարժենա, կոնֆետեղենն ու ջրերը՝ նույնպես մի այդքան: Սալաթներ, թխվածք, պանրի տեսականի ու կարագ, այլ մանրմունր բաներ՝ էլի մի 20 հազար: Ամենաթանկը, իհարկե, խմիչքն է, որի վրա ըստ նախասիրությունների մի 40 հազար ծախսվում է, եւ տուփով շոկոլադեղենը, որով հայերը սիրում են միմյանց տները գնալիս իրար պատիվ տալ: Արդեն թակում ենք 200 հազար դրամի դռները: Մենք, իհարկե, չհաշվեցինք միջինից ավելի բարձր կենսամակարդակ ունեցողների՝ թանկարժեք թառափների եւ սաղմոնների, սեւ եւ կարմիր ձկնկիթների հանդեպ հազարավոր դոլարներ արժեցող սերը, զանազան թանկարժեք աղանդերային ձեռքբերումների նրանց ծախսերը, իսկ օլիգարխների՝ միմյանց զարմացնելուն ուղղված ապխտած թանկարժեքությունների տեղադրումներն իրենց 10-մետրանոց սեղանների թանգարանային ձեւավորում հիշեցնող սարքուկարգին՝ մեզ չեն վերաբերում:

Իսկ ահա աղքատության նվազագույն շեմից ներքեւ գտնվող եւ բավական ստվար թիվ կազմող ընտանիքների ծախսերը կախված են միայն ու միայն նրանց հնարավորությունից, ու ոչ երբեք՝ ցանկություններից:

***Հ. Գ. - Խանութներում սկսված ամանորյա աժիոտաժն ինձ հունից հանում է: Մարդիկ որ սկսում են պիտանի ու անպիտան ամեն բան հիմնիկվանից հավաքել՝ ոնց որ փախեփախի պատրաստվելիս լինեն: Ու դա վիրուսի պես բան է՝ վարակիչ: Բա էն քաղքենիական անիմաստ փողթափոցին... որսի միս, մի քանի հարյուր դոլարանոց ձուկ, մի քանի հազար դոլարանոց գրող ու ցավ...***

***Անհանգստության ու անկատարության զգացումն է պատում ինձ ողջ Նոր տարում, հատկապես երբ տարբեր չտեսական ու քաղքենիական սեղանների մոտ եմ հայտնվում. իմ ճանաչած բոլոր աղքատ մարդիկ մտովի հանգիստ չեն տալիս ինձ ողջ Նոր տարվա ընթացքում, ու միշտ մտածում եմ՝ ինչքան պիտի ներսից դատարկված լինի ազգը, որ դրսի աղքատության ֆոնին տոնական թանկարժեք զահրումար փորը լցնի, զկռտա ու մնացած օրն անցկացնի ոսկեզօծ զուգարանում...***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 19.12.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: